



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերջագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

-489-

Բ. ԲԵԼԵՆՅՈՒԲՍԿԻ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
Յ Ե Վ
ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԸ

- 469 -

Բ. ԲԵԼԵՆՅՈՒՄՅԱՆ

ԱՐՏԱԳՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ՅԵՎ ՊԻՆՆԵՐԱԿԱՆ ԿՈՆԵԿՏԻՎԸ



ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Այս դատում գրված է պիտաներական կոլեկտիվի արտադրողական աշխատանքի հարցը քաղաքի պայմաններում: Կոլվարը, սկսելով իր աշխատանքը կոլեկտիվում, շատ շուտով կանդնում է այս հարցի ուսմը:

Առանց յերեխաների ամբողջ մասսային ներգրավելու սոցիալիստական շինարարության առաջադրած խնդիրները իրագործման առաջընթացում, առանց պայքարելու խորթ ազդեցությունների դեմ յերեխաների վրա, պիտաներական կոլեկտիվը աշխատել չի կարող: Ուստի այս դասը նպատակ ունի կոլվարին դադարի տալ արտադրողական աշխատանքի կառուցման և նրա խնդիրների մասին, լուսաբանել մանկական կոմունիստական կազմակերպության և արտադրողական աշխատանքի փոխազդեցությունների հարցը, խոսել պիտաներական կոլեկտիվի ծավալելիք արտադրողական աշխատանքի բովանդակության, ձևերի և մեթոդների մասին:

Արտադրողական աշխատանքում հիմնական դեկավար կազմակերպությունը, վորը դաստիարակչական ամբողջ աշխատանքին տայիս և հասարակական-քաղաքական հաստատ գերբազմություն, հանդիսանում է մանկական կոմունիստական կազմակերպությունը: Պիտաներները, տանելով անմիջական գործնական աշխատանք ձևը ձևովի տված մի շարք կազմակերպությունների հետ (Լուսբանի, Արհմիություն, Մանուկները Բարեկամների Ընկերություն և այլն), միաժամանակ մտնում են վորպես այդ աշխատանքի քաղաքական դեկավարները: Ուստի դասը կազմելիս հարց ծագեց—ուրեմն ինչպես դատել արտադրողական բնդհանուր աշխատանքը, վորը տարվում է ստացիոնար արտադրողական հիմնարկում, այն անմիջական աշխատանքից, վորը տարվում է կոլեկտիվի ուժերով:

Արտադրողական աշխատանքի խնդիրների յուժումը կարող է ապահովել միայն այն դեպքում, յերբ լայն մասնակցություն են ցույց տալիս հասարակայնությունը և հասարակական կազմակերպությունները: Կոլեկտիվի համար բնավ պարտադիր չէ, վոր նա միայն իր ուժերով տանի արտադրողական աշխատանքը: Ընդհանուրապես, կոլեկտիվի խնդիրն է ժողովրդական լուսավորության որդանների հետ միասին ներգրավել և կազմակերպել հասարակայնությունը: Մհա հենց դրա համար չպետք է առանձնացնել այդ յերկու խնդիրները և դասը բաժանել յերկու մասի:

Կոլվարը այս դասը կարող է ոգտագործել յերկու ձևով. 1) հաշիփ առնելով տեղական պայմանները և հնարավորությունները այսպես աասած իր անմիջական աշխատանքը տանելու համար, և 2) կոլեկտիվը, վորպես արտադրողական աշխատանքը կազմակերպող դեկավար, պետք է ոգտագործի այս դասը արտադրողական աշխատանքին հարկ յեղած բովանդակություն տալու համար:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Կոլտուրական շինարարության առանձնատկույթյունները ցայտուն կերպով արտահայտեց Ն. Կ. Կրուպսկայան ժողովրդական կրթության հարցերին նվիրված կուսակցական խորհրդակցության ժամանակ: Մասսաների կուլտուրական սպասարկման ամբողջ գործին պետք է տրվի միանգամայն նոր, աննախընթաց լայն թափ, պետք է հաստատվի ամենախոր կազմակերպական շինարարության բոլոր աստիճաններում կուլտուրական աշխատանքի և սոցիալիզմի շինարարության ինչպես և յերկրի ներսում և միջազգային մասշտաբով ծավալվող պրոլետարիատի դասակարգային պայքարի միջև:

Սա ամբողջապես վերաբերում է նաև յերեխաների կոմունիստական գաստիարակությանը:

Ընկ. Բուբնովը նույն խորհրդակցության ժամանակ ասաց.— Մենք այժմ կուլտուրական Փրոնտում մեր առաջ ունենք յերկու հիմնական խնդիր—մասսաների կուլտուրական վերելքի խնդիրը և դանապան մասնագիտությունների կազմեր պատրաստելու խնդիրը: Կուլտուրական վերելք և կազմեր—միևնույն պրոբլեմի յերկու կողմերն են:

Բայց պետք է իմանալ, ինչպես պատրաստել կազմեր: Մեր առաջ գրված է վերին աստիճանի պատասխանատու մի խնդիր—նոր աճող սերնդից դաստիարակել «նոր, կոմունիստական հասարակության կառուցողներ և մարտիկներ»: Ինչպե՞ս հասնել դրան: Դրա պատասխանը վ. ի. Լենինի հետևյալ պատգամն է. «Յերիտասարդությունը իր ուսման, դաստիարակության, կրթության ամեն մի քայլը պետք է կապի այն ընդհանուր պայքարին մասնակցելու հետ, վոր բոլոր աշխատավորները մղում են շահագործողների դեմ»: Այս պատգամը կաղմում է կոմունիստական դաստիարակության հիմքը:

Յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունը պետք է կառուցվի պոլիտեխնիկական լայն հիման վրա: Պոլիտեխնիցիզմը նշանակում է ռուսումը միացնել արտադրական աշխատանքի հետ, ծանոթանալ տեսականում և գործնականում հասարակական արտադրության հիմնական տեսակների հետ, ուսումնասիրել հիմնական արտադրական պրոցեսները և սովորել գործածելու ժամանակակից աշխատանքի հիմնական գործիքները—այս է հիմնականում պոլիտեխնիցիզմի էությունը» (ընկ. ընկ. Բուբնովի և Սկրիպնիկի թեղիսներից, ժողովրդական կրթության նվիրված կուսխորհրդակցություն):



Արտադպրոցական աշխատանքի անհրաժեշտությունը

Շատերին մինչև այսօր ել թվում է, թե յերեխային դաստիարակում է միայն դպրոցը, միայն պիտոների ուղեկցումը: Այդ սխալ է: Յնդերևան դաստիարակում է մեր հասարակական և անտեսական կյանքի, ընտանեկան պայմանների, կուլտուրական ձեռնարկումների (կինո, թատրոն և այլն) ամբողջ սխառնումով, մի խոսքով—միջավայրով:

Իսկ ի՞նչպես է պատկերը ներկայումս:
Յերեխան դպրոցում մնում է ողբական 4—6 ժամ:

Մանկական շարժումը ընդգրկում է մոտավորապես ամեն մի ընտանիքից մի յերեխա:

Ծագում է քաղաքական խռոտագույն կարեւորութուն ունեցող մի հարց, ի՞նչպես կազմակերպել միջինումս յերեխաների ճիշտ դաստիարակութունն այն ժամանակ, յերբ նրանք դուրս են դպրոցի և սրտանեկական շարժման դաստիարակչական ազդեցութեան շրջանակից: Ի՞նչպես ջանջախել դասակարգային թշնամու վորձերն իր թաթը դնելու յերիտասարդութեան վրա: Այս հարցի պատասխանը հանդիսացավ ժողովրդական կրթութեան ընդհանուր սխառնում հատուկ մի ողակի աշխատանք կոչված արտադպրոցական աշխատանքի կազմակերպումը:

ՀամԼԿՅԵՄ 13-րդ համագումարը մեզ ստիպ է այն դերեկտիվը, վոր «անցման շրջանի պայմաններում, յերբ դեռ շատ ուժեղ է հին կենցաղի ազդեցութունը, յերբ ընտանիքի և վոզոցի ազդեցութունը շատ հաճախ կրում է բացասական բնույթ, արտադպրոցական աշխատանքը ստանում է կարեւորագույն նշանակութուն: Իր մասշտաբով լայն, վորակով հետաքրքիր և ոգտակար արտադպրոցական աշխատանքը միայն կարող է ծառայել վորպես լուրջ միջոց յերեխաների ուշադրութունը հեռացնելու վորոցի բացասական կողմերից, վատ սովորութիւններից և կծուայն յերեխաների կոմունիստական դաստիարակութեան գործին»:

Արտադպրոցական աշխատանքը, հիմնարկները և ձեռնարկումները վորոշ սխառնի ձևով, այստեղ դալիս է ողնութեան, միանալով, վորպես ինքնուրույն աշխատանք, յերեխաների կոմունիստական դաստիարակութեան ընդհանուր սխառնին: «Արտադպրոցական աշխատանքը հանդիսանում է աճող նոր սերնդի կոմունիստական դաստիարակութեան ընդհանուր շղթայի ինքնուրույն, շատ խոշոր մի ողակի» (Լուստողկոմատի թեզիսները արտադպրոցական աշխատանքի մասին):

Արտադպրոցական աշխատանքի խնդիրները

Արտադպրոցական աշխատանքը պետք է.

1. Անկաղմակերպ յերեխաների մասսային ներգրավի սոցիալիստական շինարարութեանը գործնական մասնակցութուն ցույց տալու հումար:

2. Լուսարանի յերեխաներին հասարակական և քաղաքական ընթացիկ անցքերը:

3. Նպաստի ըմբռնելու և գտնելու դասակարգային պարզորոշ պատասխան այն բոլոր հարցերին, վորոնք ծագում են յերեխայի և ող-

տանու մեջ ընտանիքում, վորոցում, դպրոցում մեր անցման շրջանի սոցիալարարութեան դժվարութիւնները կապակցութեամբ:

4. Սնտղծել պայմաններ և նպաստել Ֆիդիկական նորմալ զարգացման:

5. Պատասխանել նրանց տարիքի հետ կապված հարցերին (պրոֆեսիայի ընտրութիւն և այլն):

Քայց կան մարդիկ, վորոնք կարծում են, թե արտադպրոցական աշխատանքը նեղ կուլտուրական գործ է:

— Մենք ուզում ենք, ասում են նրանք, վոր յերեխաները շարութեան չանեն և կուրիտ չվարվեն մեծերի հետ, դրա համար պետք է նրանց կարգալ գրքեր, նրանց հետ միասին սարքել պտույտներ անտառում, դնել ներկայացում և կազմակերպել խաղեր:

Այս տեսակետը հիմնովին սխալ է: Պիտոներկազմակերպութիւնը դեմ դուրս պետք է գա նման տեսակետ ունեցողներին: Այդ տեսակետը վոր այլ ինչ է, յեթե վոր արտադպրոցական աշխատանքը դասակարգային գծից չեղելու մի վործ:

Դպրոցը, պատկառնարժումը և արտադպրոցական աշխատանքը

Կարող են առարկել, վոր նույն ուղղութեամբ են աշխատում թե՛ դպրոցները և թե՛ մանկաշարժումը: Այս առարկութիւնն իրավացի չէ: Դպրոցը, մանկաշարժումը և արտադպրոցական աշխատանքն իրենց առջև ունեն միևնույն խնդիրները, թեև պատկառնարժումը, աշխատանքով դպրոցի հետ միասին, ունի քաղաքական առաջատար նշանակութուն դաստիարակութեան մյուս ձևերի վերաբերմամբ:

Սակայն այստեղ տարբերութիւնը խնդիրների մեջ չէ, այլ այդ խնդիրների լուծմանը մոտենալու տարբեր ձևերի մեջ:

Դպրոցն իր սխառնատիկ հնարավորութիւնները այդ ընդհանուր խնդիրները լուծելու համար:

Պատկառնարժումը իր կազմակերպչական հաստատուն ձևով, հարուստ ինքնադրժուներութեամբ և քաղաքական պարզորոշ բովանդակութեամբ այլ կերպ է լուծում այդ խնդիրները:

Արտադպրոցական աշխատանքը յերեխաների հետ վորոշ հիմնարկների և ձեռնարկումների ձևով կառուցվում է կոմունիստական խնդիրներ լուծելու համար նույնպես այլ ճանապարհով: Մանկական կինոն և հրապարակ-սրբալուրի բնակկոպրնիկերութեան կից, մանկական տեխնիկական կայանը և տեխնիկների իմբակը, մանկական համալսարանը և այլն միանում և կազմում են մի ամբողջութիւն, ունենալով նման դեք, բայց առանց խտորեն կենտրոնացվելու: Արտադպրոցական աշխատանքը ծավալվում է հենվելով յերեխաների ատոլ պահանջների և հետաքրքրութիւնների վրա կամավոր հիմունքներով, և այդ լայն առարկայ է տալիս յերեխաների ակտիվութեան և ինքնագործունեյութեան համար: Արտադպրոցական աշխատանքը հնարավորութիւն ունի և ձրատում է աճնալայն կերպով ծավալել տեղական հասարակական ձեռնարկութիւնը, տալով ընդարձակ ասպարեկ յերեխաների հետ աշխատելու ձևերի գործում, սկսած մանկական անթերի ակումբից մինչև պրիմիտիվ հրապարակները կամ մի քանի մեարանոց մանկական անկյուն:

ները: Սակայն այս բոլորի մեջ անխախտ պետք է մնան ամենքի համար կոմունիստական դաստիարակութեան հիմնական սկզբունքները. պրոլետարական դասակարգային հասակ գլխի, յերեխաների մասնակցութիւնը սոցիալիստական շինարարութեանը, յերեխաների լայն խնդրագործունեութիւնը:

Պարտուտի ծախարան կապակցութեամբ կարող են յենթադրել, վոր արտադրողական աշխատանքի նշանակութիւնը փոքրանում է: Ընդհակառակը, ընդհանուր պարտադիր ուսուցումը հանդիսանում է «կուլտուրական հեղափոխութեան հետագա զարգացման կարևորագույն նախադրյալը» (Կենտկոմի 1930 թ. ոգոստոսի 25-ի վորոշումը):

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պիոներական և արտադրողական աշխատանքի փոխադրեցութեանը

Ի՞նչ փոխադարձ ազդեցութեան մեջ են դանիում կոմունիստական դաստիարակութեան յերկու առանձին ողակները. սրտիմշարժումը և արտադրողական աշխատանքը յերեխաների հետ:

Այստեղ պետք է հիշել պատանեկական կոմունիստական կազմակերպութեան որենքները: 3-րդ և 13-րդ որենքում ասված է. պիոները ամբողջ աշխարհի բանվորների, գյուղացիների և աշխատավորների յերեխաների հախտարիմ բարեկամն ու ընկերն է: Պիոները կազմակերպում և համախմբում է յերեխաներին Իլլիչի զբոսի տակ: Այս որենքները հիման վրա պիոներները կառուցում են իրենց աշխատանքը:

Պարզ և, վոր արտադրողական աշխատանքը առանց պիոներներ (կոմսոմոլի) ղեկավարութեան կառուցվել չի կարող: Պիոներկազմակերպութիւնը բնորոշվում է հենց նրանով, վոր նա պայքարում է վոչ միայն իր անդամների, այլև մանկական լայն խավերի կոմունիստական դաստիարակութեան համար:

Պիոներչարժումը մասսայական մանկական կազմակերպութիւն է: Նա ընդգրկում է հարյուր հազարավոր, միլիոնավոր յերեխաների: Յե՛վ պետք է ձգտել, վոր այդ միլիոնները վոչ միայն իմանան պայքարի, շինարարութեան նպատակները, վոչ միայն կարող լինեն իրագործելու այդ նպատակները, այլ և կարողանան զրանց մասին պատմել ուրիշներին, ներգրավել օրելիներին, վորոնք դեռ դուրս են պիոներկազմակերպութիւնից, խանդավառել նրանց հետ, ամեն տեսակ շահագործման, ճնշման, շրջապատող կյանքի աշխարհակութիւնների դեմ պայքարելու կրակով, խանդավառել նոր կյանքի, կոմունիզմի զաղափարներով և սիրով:

Պետք է աշխատել, վոր պիոներչարժումը տան ամ յերեխաների տրամադրութիւններին, իրենց ղեկավարական կազմակերպող ազդեցութիւնը դարձի յերեխաների ամբողջ մասսայի վրա:

Մեր ինդիքն է—նվաճել յերեխաների մասսային, խլել նրան մեղ համար խորթ ազդեցութիւնից: Ահա այս ինդիքն է զբոված պիոներկազմակերպութիւնների առաջ (Շուլյգին, «Вожатый» № 5, 1930):

Պիոներները կզաղարկին պիոներ լինելուց, յեթև զբոված ինդիքները կառարելու համար մօրթիկացիայի չենթարկելին մանուկների

ամբողջ մասսային, յեթև նրանք չկազմակերպելին այդ մասսային, յեթև նրանք չպայքարելին ընդդեմ խորթ ազդեցութեան խորհրդային յերեխաների վրա» (Ց. Կորոլևի, հեռակա դաս. «Պատկոմչարժումը, նրա էությունը և ինդիքները»):

Կոմսոմոլի 3-րդ համագումարը ընկ. Ն. Կ. Կրուպսկայայի ղեկուցման տոթիվ կայացրեց հաստակ և անվերապահ մի վորոշում. «Արտադրողական աշխատանքում կազմակերպող հիմնական կորելը և կենդանորոնք պետք է լինեն պիոներական կոլեկտիվները: Պիոներական կոլեկտիվներն այն հիմնական ուժն են, վորի ոգնութեամբ պետք է կազմակերպել արտադրողական աշխատանքը անկազմակերպ յերեխաների մասսաների հետ: Դրա համար մանկական մասսաները նվաճելու համար մղվող պայքարը հանդիսանում է պիոներական կազմակերպութեան ամենահիմնական ինդիքներից մեկը»:

Արտադրողական աշխատանքի դրութեանը պիոներկազմակերպութեան մեջ

Սակայն ի՞նչ մասնակցութիւն է ցույց տալիս «հիմնական ուժը» արտադրողական աշխատանքին: Արդյոք նա հարկ յեղած չափով ծախարկ է աշխատանքը անկազմակերպներին հետ:

Վոչ: Այդ աշխատանքը դեռ շատ անբավարար է: Պիոներկազմակերպութիւնը թույլ մասնակցութիւն է ցույց տալիս արտադրողական հիմնարկներին աշխատանքին: Այդ վկայում են փաստերը:

Շատ կոլեկտիվներ դեռ չեն ըմբռնել, վոր կոլեկտիվը չի կարող և չպետք է աշխատի առանց մասսայական աշխատանք տանելու անկազմակերպների հետ:

Պետք է վերջիվերջո այնպես անել, վոր կոլեկտիվին կից ամբողջ թաղամասի անկազմակերպ յերեխաները հանձին կոլեկտիվի անանն իրենց կազմակերպչին, իրենց իսկական և միակ ղեկավարին, զրան պլյուս ուրախ և զբովիչ ղեկավարին:

Անկազմակերպ յերեխաների հետ լավագույն աշխատանք տանելու որինակ կարող է ծառայել «Կրամայա Զարյա» (Մոսկվա) գործարանին կից պիոներբարդայի փորձը: Այդ աշխատանքի վրա կենտրոնացվեց բոլոր սղակների ուշադրութիւնը: Յե՛վ բազան իրավունք ուներ պարձենալու, յերբ հայտարարում էր. «Ամբողջ Մոսկովնայա փողոցը պիոներների ձեռքումն է» («Вожатый» № 18, 1929 г.):

Ինչպե՛ս պետք է կառարվի բեկումը անկազմակերպների հետ տարվող աշխատանքում

Կանոնադրութիւնները, ցուցմունքները բավական չեն: Կոլեկտիվը չի կարող և չպետք է իր վորևե աշխատանքը կառուցի առանց անկազմակերպների մասնակցութեան: Այս պետք է արմատանա յուրաքանչյուր պիոների մտքում: Վորևեց և ձեռնարկում կազմակերպելիս կոլեկտիվը, կորվանք պիոնի միշտ հարց տան իրենց. «Ի՞նչ մասնակցութիւն կարող են ունենալ անկազմակերպներն այդ գործում»:

Պետք է իրագործել հախարի (слет) նակազը, վորտեղ ասված է. «Ամենուրեք, վորտեղ պիոներները կարող են ողնել կուսակցութեանը և

կամ սովորին, պետք է աշխատենք անկազմակերպ յերեխաների հետ միասին: Հնգամյակի համար մղված պայքարում, պետք է միասնական ֆրոնտով դուրս գանք բոլոր յերեխաների, բոլոր դպրոցականների հետ:

Պայքարելով մանկական մտւորների համար, մենք պետք է պայքարենք հանուն նրանց կենցաղի բարելավման, պայքարենք յերեխաների իրաւունքների խախտման դեմ ընտանիքում, աշխատանքում և այլն:

Արտադպրոցական աշխատանքը և պիտներկազմակերպութեան անման հարցերը

Անկազմակերպ յերեխաների հետ տարվող աշխատանքի վերջնական արդյունքը պետք է լինի պիտներկազմակերպութեան աճումը: Արտադպրոցական աշխատանքի բոլոր տեսակները և ձևերը յերեխաներին պետք է աանեն դեպի պիտներեների շարքերը: Պիտներկազմակերպութեան մեջ մասնաշախտան ներհոտանքը պետք է տեղի ունենա բանվորական և կոյտնտեսական յերեխաներից:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՅՎՈՒՄ ԱՐՏԱԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԻՍՏԵՄԸ

Ինչպե՞ս է իրագործվում դեկավարութեանը

«Արտադպրոցական աշխատանքի անմիջական ղեկավարութեանը գտնվում է ժողովրդական կուսակցութեան բաժնի ձեռքում, վերը կառուցում է այդ աշխատանքը... վերից մինչև վար պատանի պիտներների բյուրոյի, պիտներկոյեկտիվների վրա, արտադպրոցական աշխատանքը կազմակերպելով նրանց հետ միասին և նրանց միջոցով» (Լուսժողկոմատի թեզիսներն արտադպրոցական աշխատանքի մասին):

Արտադպրոցական աշխատանքը կառուցվում է սերտ շփում, պլանային կազմակերպումով կոմյերիտմիութեան և պիտներկազմակերպութեան հետ և նրանց քաղաքական անմիջական ղեկավարութեամբ:

Իսկ ինչպե՞ս է կառուցվում արտադպրոցական հիմնարկների և միջոցառումների սիստեմը շրջանում:

Յերեխաների հետ աշխատանք են տանում մի շարք կազմակերպութեաններ: Գրանով գրադիւմ են արհմիութեանը, կոոպերացիան, «Յերեխաների Բարեկամ» ընկերութեանը, «Կարմիր Սաշի» ընկերութեանը, և այլն: Ժողովրդական կուսակցութեան որգաններին կից ստեղծվում են այսպես կոչված արտադպրոցական խորհուրդներ այդ կազմակերպութեանների միջոցները և ուժերը կենտրոնացնելու համար:

Շրջանային հիմնարկները և միջոցառումները

Արտադպրոցական հիմնարկները և միջոցառումներն ըստ իրենց մատչարի և բնույթի կարելի է բաժանել յերկու տեսակի. 1) շրջանային նշանակութեան ունեցող հիմնարկներ և 2) հիմնարկներ, վորոնք անմիջական աշխատանք են տանում յերեխաների հետ:

Շրջանային հիմնական հիմնարկը, վորն ոգնում է արտադպրոցական աշխատանքներին, ունի մի շարք տարիների փորձ և արդարացրել

և իր գոյութեանը, հանդիսանում է պիտներեների կենտրոնական տունը: Պատանի պիտներեների կենտրոնական տան կից սովորարար կազմվում են աշխատանքի առանձին ճյուղերը ղեկավարող կախաններ: Մասնաշախտան տարածում են գտել տեխնիկական, գյուղատնտեսական, կուլտուրա-մասնաշախտան, օդամ-ֆիզիկուլտուրային, եքսկուրսիոն և այլ կախանները: Այս կախանները խորհրդով (կոնսուլտացիա), ցուցադրումով, գործնական ոգնութեամբ, գործիքներով և աշխատողներով սպնում են արտադպրոցական ցանցի ստորին բջիջներին կարգավորելու աշխատանքը, անցկացնելու մասնաշախտան ձեռնարկումներ, ինչպես՝ տոներ, կոնկուրսներ, եքսկուրսիաներ և այլն:

Հիմնական շեշտը թե՛ պատանի պիտներեների կենտրոնական տան և թե՛ կախանների աշխատանքում դրվում է անմիջական աշխատանք տանող մանկական ակտիվի բնատրուկաժի (հրահանգման) վրա:

Բացի այդ, գոյութեան ունի արտադպրոցական մանկական հիմնարկներ լայն ցանց մանկական կիտներին, ակումբներին, ստադիոններին, լայվ սարքավորված մեծ հրապարակների ձևով: Նրանք սպասարկում են շրջանի մեծ մասին կամ ամբողջ շրջանին:

Բացի ստացիոնար, մշտապես աշխատող հիմնարկներից (ակումբ, հրապարակ և այլն) արտադպրոցական աշխատանքի սիստեմը լրացվում է մի շարք այսպես կոչված ձեռնարկումներով, ինչպես՝ մասնաշախտան տոներ, նվիրված քաղաքական կամ պանիաներին, եքսկուրսիաներ, յերեխաներ, կիտեսանսներ և այլն: Սիստեմատիկ կերպով անցկացված և լայվ կազմակերպված ձեռնարկումները հաղխանում են լավագույն միջոցը յերեխաների մասնաշին արտադպրոցական աշխատանքով ընդգրկելու համար:

Արտադպրոցական աշխատանքի կառուցումը արտադպրոցական մեջ

Այստեղ չի կարելի տալ մի ընդհանուր ստանդարտ: Այդ հակասում է արտադպրոցական աշխատանքի հիմունքներին: Արտադպրոցական աշխատանքն ունի բազմազան տեսակներ և ձևեր, վորոնք ծագում են սովեն որ գործնական աշխատանքի ընթացքում: Կարելի է տալ միայն ընդհանուր գրույթներ և նկատառումներ, վորոնք այնուամենայնիվ կարող են շատ ոգտակար լինել:

Արտադպրոցական ստորին աշխատանքը միայն այն ժամանակ կառուցա կենտրոնակ և ներքծված քաղաքական խոր բովանդակութեամբ, յերբ նա կիստուեյվի արտադպրոցական կից: Ահա հարցի արմատը:

Գործարանները իրենց կազմակերպող արդեցութեամբ ընդգրկում են վորոշ արտածութեան (մտակա թաղամասերը, վորոնք ամբացված են Լուսարածնի և պիտներեների շրջբյուրոյի կոզմից): Արտադպրոցական կից կազմակերպվող արտադպրոցական աշխատանքի համար վորոշ բաղա կարող է պտնալ բանվորական ակումբը, պիտներեների ակումբը և այդ արտադպրոցական դպրոցը (Փարբիկա-գործարանային յոթնամյակ, տեխնիկում և այլն): Այդ աշխատանքի ղեկավարութեանը հանձն է առնում կոմյերիտական բջիջի պիտներական հանձնաժողովը: Այստեղ միասնում են դպրոցի, ակումբի, յոշոր բնակկոոպընկերութեանների ներկայացուցիչները, բանվորական ակտիվը և արտադպրոցական աշխատանք տանող այլ կազմակերպութեանների ներկայացուցիչները:

Պիոնեռական կոլեկտիվը գլխավոր և բանվորական ակումբի հետ միասին կազմակերպում է մի շարք արտադրողական ձեռնարկումներ, վորոնք անց են կացվելու բնակչության կոլեկտիվներին և բանվորական տներին կազմվելու անկոլեկտիվում, բարձր հրատարակներում — երկուստեքաներ, դրույցներ և հասարակական-ուղտակար աշխատանքներ:

Մուշոր ձեռնարկություն մեջ արտադրողական աշխատանքի կազմակերպումը հանձնարարվում է հատուկ արտադրողական կազմակերպչի, վորը ուժիկ է ստանում Լուսարժնից:

Կարիք չկա ապացուցելու, վոր յեթե պիոնեռական կազմակերպությունը (պիոնեռական ձեռնարկությունը) չկարողանա հասարակությունը ուղտակար կենտրոնացնել արտադրողական աշխատանքի վրա, ապա լայնածավալ աշխատանքի փոխարեն կարող է ստացվել մեծ ազդուկ, բայց չնչին արդյունք: Յերեսաների հետ աշխատանք տանելու համար պիոնեռները պետք է ներդրվեն մանկավարժներին, վորակյալ բանվորներին, ինժեներա-տեխնիկական ուժերին և բանվորական ակումբի ապարատը: Բանվորական ակումբներին և բանվորական պալատներին համար փայլուն որինակ կարող է ծառայել Չագորսկու անվան բանվորական սրահատը (Մոսկվա): Չագորսկու անվան պալատը տասն ուր մի անգամ յերեսաներին է հատկացնում ամբողջ շենքը, շտատը և միջոցները: Այդ «մանկական որբեր» կազմակերպչը պիոնեռական կազմակերպությունն է (բաղան):

Պիոնեռական կազմակերպություն կողմից արտադրողական կազմակերպչի հետ միասին կազմված պլանը պետք է մտցնել արտադրողական կոլեկտիվաշխատանքի ընդհանուր պլանում:

ԱՐՏԱԳՊՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ,
Ձեվերը Յեվ Մեթոդները

Պատանակական կոմունիստական կազմակերպությունը, ողնելով կուսակցությունը, կամ յերիսմիությունը և բանվոր դասակարգին իրադործելու հնդամյա պլանը, այդ դործին մասնակից և դարձնում անկազմակերպ յերեսաների լայն խավերին արտադրողական աշխատանքի տարբեր ձևերի միջոցով:

Մարիլիգացիայի յենր-արկել պիոնեռական մասսաներին արտադրողական աշխատանքը ուժեղացնելու համար

Անկազմակերպ յերեսաներին այդ աշխատանքին լծելու համար կոլեկտիվից պահանջվում է լուրջ մոտեցում և խնամոտ վերաբերմունք: Պիոնեռական կազմակերպությունը միայն այն ժամանակ կկարողանա կատարել իր դերը արտադրողական աշխատանքում, յերբ նա մորիլիգացիայի յեն յենթարկում իր ողակներին և կոլեկտիվներին մասնակցելու արտադրողական աշխատանքին: Մակայն ի՞նչ ենք տեսնում հաճախ դործնականում: Կորվարը ստանում է նակաղ. «Կոլեկտիվը համարմիությունական հավաքի վորոշումները կատարելու համար պետք է ծավալի արտադրողական աշխատանքը իր արտադրության մեջ»: Ասելը և անելը մեկ է լինում: Առաջին հանդիպած ողակին հանձնարարվում է այդ աշխատանքը, մի ողակի, վորը հաճախ չի ցանկանում, և

ամենազլխավորը, չի ըմբռնում այդ աշխատանքի իմաստն ու նշանակությունը: Արդյունքը պարզ է: Չկա աշխատանք:

Միայն այն ժամանակ կարելի յեն ապահովել աշխատանքի հաջողությունը, յերբ պիոնեռները դիտակցում, ըմբռնում են անկազմակերպներին հետ տարվող աշխատանքի առանձին կարևորությունը և անհրաժեշտությունը, պարզ կգիտակցեն, վոր այդ աշխատանքը կավելացնի կոլեկտիվի շարքերը, յերբ այդ աշխատանքը կազմակերպվում է ձեռնարկով:

Ի՞նչ պետք է հաշվի առնել աշխատանքի սկզբում

1. Բանվորներին յերեսաները — ահա անկազմակերպ յերեսաների այն մասը, վոր առաջին հերթին պետք է ընդգրկել արտադրողական աշխատանքով: Բանվորական ավանները, տները, հանրակացարանները, բակերը, բուլվարները, խաղավայրերը — ահա այն վայրերը, վոր պետք է առաջին հերթին ընդգրկել արտադրողական աշխատանքով:

2. Գիտենալով, վոր գլխավոր ուժը պետք է տալ բանվորներին յերեսաներին, կոլեկտիվը պետք է ուսումնասիրի իր ուսյունը: Անհրաժեշտ է հաշվի առնել իր շրջանի յերեսաների քանակը, գտնել այն տեղերը, ուր նրանք ալեկի շատ են հավաքվում, իմանալ նրանց սոցիալական կազմը, նրանց կյանքի պայմանները, նրանց հետաքրքրությունը և պահանջները: Այդ անելուց հետո կոլեկտիվը պետք է կապվի այն կազմակերպությունների և հիմնարկների հետ, վորոնք տանում են կամ կարող են տանել այդ աշխատանքը: Այստեղ պետք է նկատի ունենալ, վոր կոլեկտիվը վոչ միայն դործնական մասնակցություն է ցույց տալիս, այլև հանդիսանում է հիմնական մղիչ ուժը, կազմակերպչը, վորը մորիլիգացիայի յեն յենթարկում ուժերը, միջոցները և հասարակական ուղտակերպությունն արտադրողական աշխատանքի վրա:

Հասարակական ուղտակերպությունը դրավելը, հասարակայնությունից կոնկրետ պարտավորություններ ստանալը — ահա այն առաջին պահանջները, վոր դրվում են կոլեկտիվի առաջ, յերբ նա սկսում է զբաղվել արտադրողական աշխատանքի հարցով:

3. Մասսայական ձեռնարկումներ (տոներ, դրոսանքներ և այլն) և ամենուրյա ընթացիկ աշխատանքը տանելու համար կոլեկտիվը պետք է հոգ տանի անհրաժեշտ շենքեր, իսկ ամառը հրատարակներ ձեռք բերելու համար: Իրա համար պետք է ոգտադործել բանվորական ակումբը, այգին, դպրոցի շենքը և այլն:

4. Լուսարժնի կողմից արտադրողական աշխատանքին հատկացված միջոցները պետք է ողնեն կոլեկտիվին ինժեներական և արտադրողական կազմակերպությունների համար միջոցներ բաց թողնելու աշխատանքը ալեկի խոր և լայն ծավալելու համար:

5. Հաշվի առնելով յեղած ուժերը և միջոցները և ունենալով աշխատանքի ծրագիր, արտադրողական կազմակերպչը և կոլեկտիվը պետք է նախահաշիվ կազմեն: Հասարակական կազմակերպություններին ստացված միջոցներով պիոնեռները և անկազմակերպ յերեսաները իրենց ուժերով պետք է կահավորեն շենքը և գնեն անհրաժեշտ դրականություն, սարքավորում և նյութեր:

Յուրաքանչյուր կոլեկտիվ պետք է ձգտի իրադործել հետևյալ լուրջը:

«Անխաբի բոլոր անկազմակերպ յերեխաները պետք է ընդգրկվեն արտադրողական աշխատանքի այս կամ այն տեսակով»: Այդ են պահանջում կուրսուրական շինարարութեան տեսակերը:

6. Ծանոթանալով իր աշխատանքի ուսուցիչ հետ, իմանալով յերեխաների սոցիալական և տարիքային կազմը և այն սրբանները, վորոնց մեջ տարվելու յե աշխատանքը, պետք է մտածել, թե ինչպիսի աշխատանքով պետք է մտունալ անկազմակերպներին: Իրա համար պետք է խորհուրդ հարցնել և ոգնուել յուն խնդրել պատանի պիտներնեքի կենտրոնական տնից և կենտրոնական տան մանկական կայաններից — նրանք կոչեն կազմելու աշխատանքի պլանը:

7. Յեթե կոլեկտիվն աշխատում է բնակչության մեջ, ապա նա ամենից առաջ պետք է ներգրավի այդ տանն ապրող պիտներներին:

8. Պիտներները, կոլվարը և մանկավարժները մեծ սխալ կկատարեն, յեթե նրանք կազմակերպչական ամբողջ աշխատանքը տանեն առանց անկազմակերպ յերեխաների մասնակցութեան: Անկազմակերպ յերեխաները միայն այն ժամանակ կզան պիտներներին մոտ, յերը նրանք կըմբռնեն արտադրողական աշխատանքին:

9. Նախնական կազմակերպչական աշխատանքը շատ ժամանակ չպետք է խլի — ամենաշատը մի տասնորակ:

Ինչպե՞ս սկսել

Կոլեկտիվն ախարտել է կազմակերպչական աշխատանքը, հաշիվ յե առել յերեխաների կազմը, հայտարարել է նրանց պահանջները և հետաքրքրութունը, ներգրաված են հասարակական ուժերը և հասարակական ուղղորդութունը:

Ի՞նչ պետք է անել այդ բոլորից հետո:

Պետք է նկատի ունենալ, վոր յերը պիտներները մոտենում են հաճախ կոլեկտիվում, մանր չարութուններով տարված յերեխաներին և հանկարծակի առաջարկում են դրադիվել հասարակական կարևոր գործերով, վորոնք պահանջում են նախապատրաստական մեծ աշխատանք, նրանք անկասկած հանդիպում են անհաջողութեան:

Յուրջ տարու համար, թե ինչպես պետք է սկսել աշխատանքը, մենք կարող ենք ոգտադործել «Կրանայա Չարյա» գործարանին (Մոսկվա) կից պիտներական բաղայի վորձը: Այդ գործարանի պիտներներն ինքնաբերաբար, միայն կոլվարի խելացի ոժանդակութեամբ, խուլիզանների ղեկավար Սաշկա Կրիվոյի (ծուռ Սաշկայի) աղղեցութունից յալեցին անկազմակերպ յերեխաներին և նրանց հակահասարակական ճղատմները և հետաքրքրութունը շուտ ավին դեպի հասարակական աշխատանքը: Ինչի՞ց սկսեցին նրանք:

«Յերկար խորհրդակցելուց հետո՝ վորոշեցինք. դնալ և նստել Սաշկա Կրիվոյի մոտ հանրակացարանի բակում, վորտեղ հավաքվում են Սաշկայի «սողերը» և դարձուկա նվազել: Յերեխաները կզան մեզ մոտ, իսկ մենք իրը թե բալական նվազելուց հետո, սկսում ենք պատմել Չուխնովսկու մասին, թե ինչպես նա դնացել է Հյուսիսային բեվեռ սատույցների մեջ: Այսպես մեկ-յերկու անգամ» («Бауманцы» ժողովածու, 1929 թ.):

«Սաշկան իր բայբայիչ աղղեցութունը տարածում էր բանվորական

տներն բակերի հողաթմբերի վրա, վորտեղ խաղում են յերեխաները: Սաշկայի հողաթմբերին հակառակ մենք առաջադրեցինք մեր պիտներական «կարմիր հողաթմբերը»: Յեվ ի՞նչ էք կարծում, «կարմիր հողաթմբերի» միջոցով մենք ներգրավեցինք տասնյոթ յերեխաների: «Կարմիր հողաթմբեր» իրենց արդարացրին: Մենք նրանց վրա աշխատանքը կազմակերպեցինք այսպես, նախ՝ խաղեր, հետո շուրջպար, իսկ հետո գրույցներ Չուխնովսկու, Ամունդոսնի, կեղծ հրաշքների մասին: Անեկդոտներ, յերգեր, դարձուկա»... («Бауманцы» ժողովածուից):

Այս փորձը վկայում է, վոր արտադրողական աշխատանքը պետք է սկսել մասսայական գրավիչ ձեռնարկումներից:

Սկզբում ուղղորդութունը պետք է դարձնել հետաքրքրական խաղեր, դվարձութուններ, գրույցներ, կինո ցուցադրումներ և այլն կազմակերպելու վրա, մի խոսքով առաջին հերթին պետք է մասսայական հետաքրքրական ձեռնարկումներով կազմակերպել յերեխաների ազատ ժամերը, կտրելով նրանց միջավայրի հակահասարակական աղղեցութունից*):

Սկսելով արտադրողական աշխատանքը, պետք է ձգտել ներդրվել յերեխաներին մեր ախումբում, մասնակից դարձնել կոլեկտիվի ձեռնարկումներին, ինչպես՝ կոլեկտիվի յերեկոն, դահուկային արշավը, կոլեկտիվով միասին կինո դնալը և այլն:

Սակայն այդ բոլորը չի նշանակում, վոր մենք յերեխաներին պետք է կերակրենք սպաքաղաքական ջրարի ապուրով: Վո՞չ, մենք նրանց պետք է կապենք սոցիալիստական շինարարութեան ընթացիկ խնդրների հետ: Այս աշխատանքում մենք փողոցին հակադրում ենք սոցիալիստական շինարարութեան խանդավառութունը:

Աշխատանքի սկզբում չպետք է ձգտել յախույն ամբողջ դործին տալ յիստ կազմակերպչական ձևեր: Կազմակերպչական ձևերի և ախիվն ոգտադործելու հարցը պետք է դնել միայն աշխատանքի աստիճանական ծավալման ընթացքում: Բայց այս մասին հետո:

Լայն քալով ծավալել կուլտնտափետան

Վաղուց հասունացել է արտադրողական աշխատանքում պիտներական կազմակերպչական մասնակցութեան մեջ վճուական բեկում ժացնելու խնդիրը: Վորոչ նվաճումներ կան, բայց դրանք դեռ անբավարար են: Պիտի համաձայնվել այն կարծիքի հետ, թե «մենք դեռևս չենք կարողացել բավարար չափով մեր աշխատանքի ձևերը և մեթոդները հարձարեցնել անկազմակերպ յերեխաների մասսայի վրա աղղելու խնդրին» («Вожатый» № 19, 1930, К. Соколов-ի հոդվածից):

Կոնյերիտմիտեան և պիտներկազմակերպչական աշխատանքի փորձն առաջադրում է այնպիսի ձևեր և մեթոդներ, վորոնք կոչեն մեզ ավելի լավ աղղելու յերեխաների վրա, այլիլի լավ պայքարելու մանկական մասսաների համար: Սամովնիկիի (Մոսկվա) պիտներկազմակերպչութունն առաջադրել է մասսայական աշխատանքի մի նոր ձև—

*) Տես հանձնարարված գրքերի ցուցակը, այնտեղ կգտնես անհրաժեշտ կոնկրետ նյութեր աշխատանքն սկսելու վերաբերյալ

կուլտեստաֆետա: Պիտներկազմակերպութիւնը պետք է լայն ոգտա-
գործի աշխատանքի այս ձևը:

Կուլտեստաֆետան կուլտորալի ամենակենդանի ձևն է: Նա հնա-
բաժուր է միտայն յերեխաների և աշխատավորների մաստայի մասնակցու-
թյամբ:

Եստաֆետան բաղկացած է 4-5 մարչրուտից, 4-5 խնդիրներից,
վոր կատարելու յեն առանձին կազմակերպութիւնները՝ սոցմըցման մի-
ջոցով՝ վորոշ ժամկետում:

Այդ մարչրուտ-խնդիրներում հիմնական տեղը գրավում են յերե-
խաների կոմունիստական գաստխարակության հարցերը: Ահա այդ
մարչրուտները.

1. Պայքարել կուլտաշխատանքի բարելավման համար քաղաքում և
դյուղում:
2. Պայքարել արդիֆինալանի կատարման, վորակավորման բարձ-
րացման և կազմերի պատրաստման համար:
3. Արտադարոցական աշխատանքի և անկազմակերպ յերեխաների
հետ տարվող աշխատանքի բարելավման համար:
4. Դպրոցի պոլիտեխնիկացիայի համար:

Ողակները կամալոր կերպով հանձն են առնում արչալ կատարել
այս մարչրուտներով: Մարչրուտը կատարել հանձն առնող ողակը նախ
և առաջ պարզում է բոլոր կոլեկտիվների համար ընդհանուր մարչրու-
տային առաջադրանքը, հարմարեցնելով այն իր տեղական պայմաննե-
րին: Ողակը կազմում է որացուցային սլան և անդամների միջև բա-
ժանում է մարչրուտի առանձին մասերը:

Վերցնենք այդ մարչրուտներից մեկը — արտադարոցական աշխա-
տանքի և անկազմակերպ յերեխաների հետ տարվող աշխատանքի բա-
րելավման մարչրուտը:

Այս մարչրուտը պիտներին տալ բաց է անում գործունեյության
լայն և կոնկրետ ծրագիր: Այս մարչրուտով արչալը պետք է կատար-
վի այս լուգունդով. «Բոլոր պրոլետարական յերեխաներին պիտներա-
կան կոլեկտիվ»:

Այստեղ պահանջվում է՝

- 1) Մտեղծել հասարակական բրիգադներ արտադարոցական աշխա-
տանքն ստուգելու համար (բանվորներից և հասարակական կազմակեր-
պութիւնների ներկայացուցիչներից):
- 2) Հետազոտել մեր դպրոցին և կոլեկտիվին իից թաղամասը (ու-
սումնասիրել թաղամասի անկազմակերպ յերեխաների կազմը և հաշվի
առնել նրանց քանակը):
- 3) Կազմակերպել և բարելավել արտադարոցական ցանցի աշխա-
տանքը մեր շրջանում:
- 4) Գումարել կոմիտեաներ շրջանի արտադարոցական աշխատան-
քի մասին:
- 5) Հրովիրել հասարակայնության ուղադրութիւնն արտադարոցա-
կան աշխատանքի հարցերի վրա և կազմակերպել մանուկների պաշտպա-
նության հանձնաժողովներ:
- 6) Պրոլետարական յերեխաներին ներգրավել պիտներկազմակեր-
պության շարքերում:

7) Պիտներնրի ուժերով անցկացնել քաղաքական կամարանիաներ
իրենց թաղամասերում:

8) Կազմակերպել աշխատանքը վարձով աշխատող յերեխաների և
պատանինրի հետ (լրագրաֆաճատների, կոչիկ մաքրողների, տնայ-
նագործների աշակերտների և այլն):

9) Աշխատանք տանել անապաստան և անխնամ յերեխաների հետ,
վերցնելով նրանց չեֆութիւնը և ներգրավելով պիտներկազմակերպու-
թյան շարքերում:

10) Կազմակերպել «Մանուկների բարեկամ» ընկերության բՆԻՆների
ստուգատեսը:

Ահա այս ձևով Սամովնիկի պիտներնրը կատարեցին հավաքի նա-
կազը, վորն առաջարկում է յերեսը դարձնել դեպի մանկական լայն
մասսաները:

ՊԱՅՔԱՐ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆՈՒՆ
ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԵՆՏԱՂԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

Աշխատանքի հասարակական-քաղաքական բնույթը

Յերեխաները պետք է գործնական մասնակցութիւն ցույց տան սո-
ցիալիստական շինարարությանը — ահա յուրաքանչյուր արտադարո-
ցական խմբի աշխատանքի անհրաժեշտ պայմանը: Հասարակական-ոգ-
տակար աշխատանքի նշանակութիւնը և էյութիւնը ցայտուն կերպով
յնորոշել է Ն. Կ. Կրուպսկայան. «Աշխատանքի այդ ձևն ունի հսկայա-
կան նշանակութիւն, վորովհետև մշակում է կոմունիստական վերա-
բերմունք դեպի աշխատանքը, վորովհետև յերեխաները, մասնակցելով
այդ հասարակական ոգտակար աշխատանքին, նրա վրա կնայեն վարպե-
տի հետ հասարակական պարտականության, այդ գործին կմտնեն և
սարակական շահերի տեսակետից: Իսկ այդ շատ կարևոր է»:

Այս, այդ շատ կարևոր է: Յել պիտներնրը պարտալոր են ապա-
հովել այդ: Պիտներնրը պետք է արտադարոցական աշխատանքում
ընդգրկված յերեխաներին մղեն դեպի հասարակական-ոգտակար աշ-
խատանքը: Հասարակական-ոգտակար աշխատանքի առաջ կա գործու-
նեյության լայն ասպարեղ: Չպետք է կարծել, վոր յուրաքանչյուր կո-
լեկտիվ պարտալոր է հասարակական աշխատանքը տանել միայն իր
մասնադիտության գծով: Թե՛ յերաժշտական խմբակը, թե՛ տահնակա-
վորների խումբը, թե՛ բանվորական մանկական անկյունում աշխատող-
ները հիանալի կերպով կարող են մասնակցել բոլոր աշխատանքներին,
որինսի՛ ստուգել, թե՛ իրենց տան բոլոր յերեխաներն ընդգրկված են
պարտալորով, հաշվաքել պարկեր՝ հացամթերումները ժամանակ, մաս-
նակցել սասիլ հավաքելու շարքերակին և այլն:

Բաղլուսավորութիւնը պետք է ոգնի յերեխաներին ըմբռնելու ի-
քնեց գործնական աշխատանքի գասակարդային, քաղաքական նշանա-
կութիւնը, վորդերի նրանց նորանոր աշխատանքների համար և պա-
տասխանի յերեխաներին շրջանադարձ միջավայրում ծագած հարցերին
Պակայն չպետք է յերեխաներին ձանձրացնել չոր պարապմունքներով:
Քաղաքական լուսավորության համար կոլեկտիվը պետք է աշխատը
բաժնորեն ոգտադործել կինոն, թատրոնը, քաղվիկտորիաները, խաղե-
րը, գեղարվեստական ընթերցում և այլն:

Իժմար և նշել քաղաքական լուսավորութեան կոնկրետ բովանդակութիւնը: Արտադրող անհար և ունենալ մշտական ծրագիր, ինչպէս դպրոցում: Արտադրողական աշխատանքում քաղլուսավորութեան բովանդակութիւնը պէտք է ընթացիկ կյանքից: Արտադրողական կոնկրետը պետք է արձագանքի ընթացիկ կյանքի բոլոր հիմնական հարցերին: Ինչպէ՞ս մշակել այդ հարցերը — խորը, թե մակերեսային կերպով, յերկար, թե կարճ ժամանակ — այս բոլորը կախած է տեղական պայմաններից, նայած յերեխաների կազմին և հարցի նշանակութեանը: Հասկանալի չէ, վոր բոլոր հարցերը պետք է լուսարանվեն դասակարգչին, կոմունիստական տեսակետից:

Քաղաքական լուսավորութիւնը չպետք է թույլ տա, վոր արտադրողական խումբն անանձնանա, կտրվի հասարակայնութիւնից:

Քաղաքական դաստիարակութեան հարցի հետ սերտ կապված է յերեխաների մեջ իրենց շրջապատի հանդէպ մատերիալիստական, կրօնին խորթ աշխարհայացք դաստիարակելու և նրանցից համոզված ինտերնացիոնալիստներ պատրաստելու խնդիրը:

Մանկական հնգամյակի համար

Մի շարք կազմակերպութիւններ (Պետպլան, ԺՏԳԽ, Աշխօղկոմատ և Լուսօղկոմատ) և Պիտեբնի Բյուրոն մշակում են մանկական 5-ամյա պլանը: Մանկական 5-ամյակի մեջ մտնում է այն ամենը, ինչ տնտեսական-կուլտուրական շինարարութեան հնգամյա պլանի ընթացքում արվելու չէ յերեխաների համար: Պայքարել մանկական հնգամյակի կատարման, պայքարել կադրերի համար նշանակում է պայքարել հանուն յերեխաների կոմունիստական դաստիարակութեան: Ուստի հնգամյակի կատարումը հանդիսանում է արտադրողական աշխատանքի կարևոր խնդիրներից մեկը:

Պոլիտեխնիկցիզմն արտադրողական աշխատանքում*

Պոլիտեխնիկցիզմը դառնում է բանվորական լայն մասսաներին հանրամտութեան մտակ հասկացողութիւն: Պոլիտեխնիկցիզմի պրոբլեմի վրա յեռանդով աշխատում է մանկավարժական միտքը: Պոլիտեխնիկցիզմը սերտորեն կապված է նոր կադրերի պատրաստման վիթխարի աշխատանքի հետ:

Ինչպէ՞ս ևր դրութիւնը մեղանում այդ անասկետից: Մեր խորհրդային, աշխատանքային դպրոցն աշխատանքային չէր այդ բանի բուն իմաստով: Պիտի խստովանել, վոր դպրոցների մեծ մասում յերեխաները կյանքի հետ չեն ծանոթանում իրենց սեփական աշխատանքի միջոցով: Իպրոցը դեռևս մեծ մասամբ յերեխաներին կյանքի հետ ծանոթացնում է միայն դասադրքի և յերբեմն ևլ դիտողութեան միջոցով (կրկուրսիաներ):

Նույն պատկերն է նաև արտադրողական աշխատանքում: Արտադրողական հիմնարկների մեծ մասում կյանքի հետ չեն ծանոթացնում

* Այս հարցի մասին ավելի մտերմաան տեղեկութիւններ տրվում են Պոլիտեխնիկցիզմը կոնկրետի աշխատանքում դասում:

աշխատանքի միջոցով, չեն ծանոթացնում յերեխաներին «արտադրութեան բոլոր հիմնական տեսակների հետ տեսականորեն և դործնականորեն» (Սկրիպնիկ, Ժողովրդական կրթութեանը նվիրված կուսխորհրդակցութեան մեջ կարդացած զեկուցումը):

Այդպիսով պատրաստված կադրերը չիչ են բավարարում սոցիալիզմի ծավալուն հարձակման և դասակարգային պայքարի սրման ժամանակաշրջանի պահանջները:

Պոլիտեխնիկական դաստիարակութեան հարցն արտադրողական աշխատանքի համար նույնքան կարևոր նշանակութիւն ունի, վորքան դպրոցների համար: Ի՞նչ է տալիս պոլիտեխնիկական կրթութիւնն աճող նոր սերնդին: «Պոլիտեխնիկական կրթութիւնը պետք է նոր սերնդին վարակի սոցիալարարութեան ուժանտիկայով և հնարավորութեան աս մասնակցելու իր ուժերի և ունակութիւնների չափով սոցիալիստական շինարարութեան մեծ դործին և դործնականում ուսումնասիրելու Ժողովրդական տնտեսութեան բաղձադան ճյուղերը» (պոլիտեխնիկական համադումարի բանաձևը Ն. Կ. Կրուպսկայայի զեկուցման առթիւ):

Նախքան պոլիտեխնիկական (աշխատանքային) դաստիարակութեան կառուցման մասին խոսելը, անհրաժեշտ է իմանալ, թե պոլիտեխնիկցիզմի ի՞նչ հիմնական պահանջներին պետք է համապատասխանի յերեխաների աշխատանքային պատրաստման բովանդակութիւնը:

Պոլիտեխնիկական դաստիարակութեան հիմունքներն ընդհանուր են յերեխաների կոմունիստական դաստիարակութեան բոլոր ողակետքի համար: Միայն պետք է համապատասխան կերպով հարմարեցնել պոլիտեխնիկական կրթութեան ձևերն ու մեթոդներն արտադրողական աշխատանքի առանձնահատկութիւններին:

Ժողովրդական տնտեսութեան վերակառուցման սոցիալիստական բնույթը պահանջում է, վորպեսզի բանվորը տիրապետի հատկութիւնների վորոշ դումար, վոր չէր տալիս և չէր ևլ կարող սալ նրան կադրերի պատրաստման հին սխառնը:

Ահա վերակառուցվող տնտեսութեան մեջ նկատվող այն հիմնական յերեքութիւնները, վորոնք պահանջում են, վորպեսզի բանվորն ունենա վորոշ (պոլիտեխնիկական) պատրաստութիւն:

Հայտնի չէ, վոր կառուցվող սոցիալիզմի յերկրում բանվորը տեխնիկական հասարակ կատարող չէ: Ամեն որ կարելի չէ տեսնել, վոր բանվորն այսոր կատարող է, իսկ վաղն սոսալ է քաչլում հրամանատարական պոստում: Մենք շատ լավ դիտենք նաև, վոր մեկ մոտ բանվորը հանդիսանում է բոլորովին այլ տիպի «կատարող», քան կապիտալիստական յերկրներում: Կուսակցական և պրոֆիտիլենական կազմակերպութիւնների աշխատանքին մասնակցելու, արտադրական խորհրդակցութեան, դյուտարարութեան, սոցմրցման և հարվածայնութեան, հանգիստական պլանի միջոցով բանվորը հանդիսանում է մեր տնտեսական շինարարութեան ակտիվ մասնակցը և կապակերպիչը: Նոր բանվորը պետք է պատրաստվի այդ դերը կատարելու արտադրութեան մեջ: Յերկրի տնտեսութեան վերակառուցումը և կերպարանափոխութիւնը հեղձեան է կլիբացնելու յերկրի և դյուղի սարբերութիւնը, Ֆիզիկական և մտադոր աշխատանքի յերեխանումը, վոր ստեղծել են իշխող դաստիարակը: Տեխնիկական պատրաստման բաց է սնում նոր բնադալաու-

11-26309



ներ մարդկային աշխատանքի համար, փոխում և բանվորի Ֆունկցիան արտադրութեան մեջ:

Տեխնիկական հեղափոխութեան այս թափի համապատասխան պետք է ծավալվի բանվորի պոլիտեխնիկական պատրաստումը, վորը պետք է տա «աշխատանքային ընդհանուր հմտութիւն, աշխատանքի լծվելու ընդհանուր վարժութիւն» (Ն. Կրուպսկայա):

Արտադրողական աշխատանքում մենք պետք է տանք այնպիսի դաստիարակութիւն, վորը «ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսներին գիտական ընդհանուր սկզբունքի հետ և միաժամանակ յերեխային և պատանուն տալիս է բոլոր արտադրութիւնների տարրական գործիքները բանացնելու գործնական ունակութիւններ» (Կ. Մարքս, «Կոմունիստական Մանիֆեստ»):

Այս ամենից հետո, խորն ըմբռնելով նոր կադրերի պատրաստման նշանակութիւնն իրոք պոլիտեխնիկական հիման վրա, ակներև է դառնում, վոր այդ նեղ-գերատեսչական «լուսժողովո՞մատային» հարց չէ: Պոլիտեխնիկական հիմքը կադրերի պատրաստման մեջ ունի անստեղծական քաղաքական հսկա նշանակութիւն:

Պայքարը պոլիտեխնիցիզմի համար դպրոցում և արտադրողական աշխատանքում այժմ պիտներական կազմակերպութեան հիմնական գործերից մեկն է: Այս հարցում ճիշտ դիրքավորում տվեց պոլիտեխնիկական համագումարը, վորը հայտարարեց. «առանց յերիտասարգութեան ակտիվ մասնակցութեան, կոմյերիտական և պիտներական կազմակերպութիւնների ղեկավարութեամբ, չի կարելի մտածել պոլիտեխնիկական դպրոցի կառուցման մասին»: Սա ամբողջապէս վերաբերում է նաև արտադրողական աշխատանքին:

Մի քանի պրակտիկների թվում է, թե պոլիտեխնիկական կրթութեան գործը միայն դպրոցական գործ է: Պետք է վերջ տալ նման լինակներին գլխում տիրող այդ յուրատեսակ «խառնաշփոթին»: Իրա հրատակ պատասխանը տվեց պոլիտեխնիկական համագումարը, վորի վորոշման մեջ ասված է. «առող սերնդի պոլիտեխնիկական դաստիարակութիւնը չի կարող սահմանափակվել միայն դպրոցով: Արտադրողական աշխատանքը, լինելով կարևորագույն ողակներից մեկը կոմունիստական դաստիարակութեան սխառնում, պետք է մաքսիմալ չափով ուղտագործվի պոլիտեխնիկական դաստիարակութեան խնդիրները լուծելու համար»:

Այս բոլորից հետո ակնհայտ է դառնում, վոր պոլիտեխնիկական, աշխատանքային կրթութեան գործն արտադրողական աշխատանքում պահանջում է բոլորովին այլ մոտեցում, քան մինչև այժմ:

Կոնկրետի համար դժվար կլինի կազմակերպել իր աղեցումթյամբ ընդգրկված յերեխաների պոլիտեխնիկական կրթութեան գործը, յի՞թե նա չգիտե, ինչ ուղղութեամբ պետք է կառուցել այդ աշխատանքը:

Պոլիտեխնիկական պատրաստման աշխատանքը պետք է ընթանա յերեք ուղղութեամբ. 1) հասարակական-աշխատանքային պատրաստութեան, 2) գիտական-տեխնոլոգիական և 3) արտադրական աշխատանքային պատրաստութեան:

Դաստիարակել յերեխաների մեջ արտադրական աշխատանքին մասնակցելու կոմունիստական այն ունակութիւնները, առանց վորոնց մարդը չի կարող կապվել օոցիալիստական շինարարութեան հետ: Հասարակական այս ունակութիւններն ստեղծվում են յերեխաներին հասարակական-ոգտակար աշխատանքին մասնակից դարձնելու միջոցով, սոցիալիստական շինարարութեանն ոգնելու գործում (ուսիլ հավաքելը, արգֆինսյլանի կատարման ոգնութիւնը ցույց տալը և այլն): Յերեխաների մեջ աշխատանքի կոմունիստական ունակութիւններն արմատացնելու համար հսկայական նշանակութիւն ունեն սոցիալիստական մրցումը և հարվածայնութիւնը: Լայն ծավալած սոցիալիստական մրցումը և հարվածայնութիւնը, յուրացվելով և լմբանվելով յերեխաների կողմից, «արմատական հեղաշրջում կկատարեն մարդկանց հայացքների մեջ դեպի աշխատանքը, վորովհետև նրանք աշխատանքը ծանր և ամոթալի բեռից, ինչպիսին համարվում էր նա առաջ, կդարձնեն պատվի, փառքի, արիութեան և հերոսութեան գործ» (Ստալին, զեկուցում 16-րդ կուսհամագումարում):

Ահա հենց այս է ընտրչում կոմունիստական հայացքը դեպի աշխատանքը, վոր յուրացնելու յեն յերեխաները:

Գիտական-տեխնոլոգիական պոլիտեխնիկական պատրաստութիւն

Արտադրողական աշխատանքում յերեխաների մեջ կարելի յե ծավալել արտադրութեան հիմնական ճյուղերի ուսումնասիրութեան գործը: Յերեխաներին անհրաժեշտ է ծանոթացնել արտադրութեան գիտական ընդհանուր հիմունքներին հետ: Առանց գիտական-տեխնիկական յայն ծանոթութիւնների, առանց ըմբռնելու ժողովրդական տեսութեան տարբեր ճյուղերի փոխադարձ կապը, բանվորը չի կարող լինել վորակալ, լավ պատրաստված: Կոնկրետի կարող է իրագործել կազմակերպված և անկազմակերպ յերեխաների յայն մաստաների գիտական-տեխնոլոգիական պատրաստման խնդիրը, կազմակերպելով արտադրական եքսկուրսիաներ, տարածելով տեխնիկական գիտելիքներ, ծավալելով տեխնիկական կայանների, իմբակների յայն ցանց, ներգրավելով վորակալ բանվորներին և ինժեներա-տեխնիկական ուժերին յերեխաների պոլիտեխնիկական կրթութեան ասպարիզում: Գիտական-տեխնոլոգիական պատրաստութեան բովանդակութիւնը պետք է արտահայտվի եջութի մշակման հիմնական յեղանակներն ուսումնասիրելու մեջ, վորանք կիրառվում են արտադրութեան մեջ: Ուսումնասիրելով նյութերի մշակման տեսակներն արտադրութեան մեջ, յերեխաները ծանոթանում են իրենց գործարանի տեխնիկայի նվաճումներին, աշխատանքի կազմակերպմանը և բանվորների հարարութիւններին արտադրութեան մեջ և արտադրութեան հանդեպ: Մշակման հիմնական տեսակներն են՝ ըլիմիական և մեքենայական: Պետք է ծանոթացնել նաև եներգիտել ոգտագործման և որդաճական նյութեր ստեղծելու յեղանակների հետ: Աշխատանքը պետք է կառուցել այն արտադրութեան հիման վրա, վորին կից է կոնկրետի:

Կոլեկտիվը, պայքար մղելով, վորպէսզէ յերկխաների լայն մասսաները ձեռք բերեն աշխատանքային ունակութիւններ, պետք է դիտարկենք թէ ի՞նչ բնույթ են կրելու յերկխաների ձեռք բերած աշխատանքային ունակութիւնները: Այստեղ պետք է հիշել Կ. Մարքսի ցուցմանը, թէ աչք պետք է արտահայտվի «բոլոր արտադրութիւնների տարբարական գործիքները բանացնելու գործնական ունակութիւններ ձեռք բերելու մեջ»:

Այս դրույթը միանգամայն ճիշտ է, յետեւ նկատի ունենալով, վոր արդունարեքութեան մեքենայացման ամժան հետ միասին նվազում է ձեռքի աշխատանքի կիրառումը, վորը պահանջում է նեղ-պրոֆեսիոնալ պատրաստութիւն, իսկ աճում է այն ունակութիւնների և պրոցանների մերձեցումը, վորոնք կիրառվում են արդունարեքութեան ամենաբարձրագոյն ճյուղերում: Յերկխաներին աշխատանքային պոլիտեխնիկական ունակութիւններ տալու աշխատանքը պետք է կառուցել արտադրական աշխատանքին մասնակցելու, հասարակական նշանակութեան ունեցող աշխատանք կատարելու միջոցով: Յերկխաների խումբը, աշխատելով իր աշխատանքում կամ ոգտադրծելով դալրոցի (կոլեկտիվի) արհեստանոցները, պետք է ողնի գործարանին կատարել պրանը: Աւստի միանգամայն իրագործելի յէ այն միտքը, թէ վորոչ աշխատանքներ յերկխաները կարող են կատարել արտադրութեան խումբի ստացված պատվերի կարգով:

Պոլիտեխնիկական դաստիարակութեան աչք յերեք մասերը սերտորեն կապված են իրար հետ: Արտադրոցական աշխատանքի բնորոշ գիծն այն է, վոր ամբողջ աշխատանքի բովանդակութեանը կառուցվում է յերկխաների պահանջների և հետաքրքրութեան համաձայն: Յենթապէս, վոր յերկխաների մի խումբ հանձն է առել կատարելու այս կամ այն առաջադրանքը: Յերք յերկխաները կատարում են աչք առաջադրանքը, կոլեկտիվը պետք է հոգ տանի, վորպէսզէ անպայման հաշվի առնվեն պոլիտեխնիկիզմի աչք յերեք մասերը:

Պիտեքական կազմակերպութիւնը շատ և շատ անելիքներ ունի արտադրոցական աշխատանքի պոլիտեխնիկացիայի ասպարիզում: Կոլեկտիվը պետք է ծախվի կազմակերպչական մեծ աշխատանք: Աչք աշխատանքի բովանդակութեան մասին գաղափար կարելի յէ կազմել ծախնութանալով պոլիտեխնիկական համագումարի այն վորոշման հետ, վորտեղ ասված է, թէ համագումարն անհրաժեշտ է դնում լայն ծախվել արտադրոցական աշխատանքը, հատուկ ուշադրութիւն դարձնելով հետևյալի վրա.

ա) Հենց այս տարի Կոմյունիստիկութիւնը ժողովուրդի որդանների և տնտեսական որդանների հետ միասին ծախվելու յէ շրջանային մանկական տեխնիկական և դրոլադանտեսական կայանների ցանցը, վորոնք պետք է ղեկավարեն բոլոր մանկական տեխնիկական կետերը, միավորումները. կազմակերպել շարժական աշխատանոցներ՝ սպասարկելու համար այն գյուղերը, վորտեղ հնարավոր չէ կազմակերպել տեխնիկական կայաններ. կազմակերպել մասսայական աշխատանքը յերկխաների հետ, պոլիտեխնիկական պրոպագանդը յերկխաների մաստաների մեջ.

բ) խոշոր արտադրութիւններում կազմակերպել գործարանային մանկական տեխնիկական կայաններ, իսկ խոշոր կոլանտեսութիւններում և խորհանտեսութիւններում՝ մանկական դրոլադանտեսական կայաններ:

գ) ծախվել երկուբսիտն-տուրիստական աշխատանքը թէ՛ քաղաքում և թէ՛ գյուղում:

դ) հրատարակել մասսայական մանկական տեխնիկական հանրամատչելի գրականութիւն, պլակատներ և այլն:

ե) աշխատանքի կուլուր-մասսայական և ղեկարգվաստական ձեւերը (կինո, թատրոն, ղեկարգվեստական գրականութիւն, մուզիկներ, ցուցահանդեսներ, յերկուներ և այլն) հարմարեցնել պոլիտեխնիկական դաստիարակութեան խնդիրներին:

Կոլեկտիվի անելիքն է՝ այս ընդհանուր ցուցմունքներն անհատապէս կենսագործել իր արտադրութեան մեջ, իր աշխատանքի վայրում:

Արտադրոցական աշխատանքի կազմակերպչի հանդիսացող պիտեքական կազմակերպութիւնը պետք է լավ մտաբերի Ն. Կ. Պրուպայի աչք խոսքերը, թէ «նոր աճող սերունդն ինքն է ձգտում դեպի արտադրութիւնը, նրան պետք է պատրաստել աշխատելու վաղվա գործարաններում, զինել գիտելիքներով, աչք գիտելիքները բոլոր պայմաններում կիրառելու կարողութեամբ» («Պրավդա», 25 հոկտեմբերի 1930 թ.):

Ռազմական և ֆիզկուլտուրային աշխատանքը

Արտադրոցական աշխատանքում, վոր տանելու յէ քաղաքային կոլեկտիվը, ուղղմական աշխատանքը չպետք է բաժանել ֆիզկուլտուրայից: Աշխատանքի աչք ձեւերի ղեկավարութիւնը պետք է հանձնարարել միևնույն ողակին կամ պիտեքներին միևնույն խմբին: Այս խմբին ողակու յէ ՊԱՁԼ-Ալիաքիմի արտադրական բՆԻՂԻց ուղարկված ընկերը:

Ֆիզկուլտուրայի ամբողջ աշխատանքը պետք է ներծծվի ուղղմականացումով: Արտադրոցական կոլեկտիվի պարագմունքներում այս աշխատանքին պետք է մեծ տեղ տալ: Ռազմական խաղի ժամանակ յերկխաների ասպրած ուժեղ զգացումները և ֆիզկուլտուրայով տարվելու տանձնապէս համապատասխան են յերկխաների հետ տարվող արտադրոցական աշխատանքին: Ստեղծյալ պետք է զգուշանալ, վորպէսզէ ուղղմա-ֆիզկուլտուրային աշխատանքը չկորցնի իր հասարակական-քաղաքական բովանդակութեանը: Որինակ՝ նշանաձգութիւն սովորելիս՝ յերկխաները պետք է հասկանան կարմիր բանակի դերը և նշանակութիւնը, վորտեղից է մեղ սպանում պատերազմի վտանգը, ովքեր են մեր թշնամիները և զաշնակիցները մեր և բուրժուական աշխարհի միջև անխուսափելի պատերազմում և այլն:

Ռազմականացման և ֆիզկուլտուրայի հատկապէս վայրուն մոմենտները (ուղղմական խաղը, կոլեկտիվ մրցում և այլն) պետք է լայնորեն ոգտադրծել արտադրոցական աշխատանքի սկզբնական շրջանում: Կոլեկտիվը պետք է աշխատի վորքան հնարավոր է մեծ թվով անկազմակերպ յերկխաների ներգրավել իր մասսայական ուղղմա-ֆիզկուլտուրային աշխատանքում: Նման մասսայական աշխատանքի ձեւեր են

Հանգիստանում ուղղական խաղերը, ուղղականացած արշավները, ուղղա-
ժամ-Ֆիզիկուլտուրային տոները և այլն:

Ռազմա-Ֆիզիկուլտուրային աշխատանքը բարդացած է հետևյալ ե-
լմաններով: 1) Ֆիզիկական ընդհանուր պատրաստություն, 2) կապը
կարծր բանակի հետ և 3) ձեռք բերել ուղղական գործի հիմնական
գիտելիքները և ունակությունները, վորոնք հասարակական-ողտակար
նշանակություն ունեն: Այս բաժնում մտնում են. սանիտարական աշ-
խատանքը, քիմիան, տուրգորաֆիան, ավիամոդելային գործը, կապը,
նշանաձգությունը, դիմակավորումը, ուղղական տեխնիկան, ուղղա-
կան յերթերը և խաղերը:

Ռազմա-Ֆիզիկուլտուրային ամբողջ աշխատանքի բովանդակություն-
ը պետք է հարմարեցնել յերեսանների տարիքին և տարվա յերեսակ-
ներին, առանձնապես լայն թափ և ստանում այդ աշխատանքն ամառվա
ընթացքում*):

Կուլտուր-մասսայական աշխատանք

Ինչպե՞ս էլին առաջ հասկանում կուլտուր-մասսայական աշխա-
տանքը: Հասկանում էլին վորպես առանձին, անկախ աշխատանք, վորը
հաճախ կենտրոնական դեր է կատարում արտադրողական աշխատան-
քի մյուս մասերի վերաբերմամբ: Առանձնապես այդ նկատելի յեր ար-
տադրողական խոշոր հիմնարկներում: Ակումբային մասսայական աշ-
խատանքի բովանդակությունը, ընդգրկելով կրթական բնույթ ունե-
ցող հարցեր, հանգստի ժամերի կազմակերպումը և ընթացիկ քաղա-
քական կյանքի հարցերը, բոլորովին չեր արտացոլում տնտեսական շի-
նարարությունը, յերեսաններին մոբիլիտացիայի չեր յենթարկում՝
մասնակցելու սոցիալիստական շինարարությանը: Գեղարվեստական
աշխատանքը, ինչպես դրամամրակը, սովետների թատրոնը, շարագ-
ներ, յերաժշտություն, խմբական յերգեցողություն և այլն, չեր կա-
ռուցվում հնդամյա պլանի տված նյութի վրա:

Անհրաժեշտ է վճռական վերակառուցում.

1. Կուլտուր-մասսայական ամբողջ աշխատանքի բովանդակություն-
ը պետք է վերակառուցել այնպես, վոր նա արտացոլի, ցույց տա յե-
րեսաններին սոցիալիստական շինարարության թափը, յանդամառու-
թյունը: Կուլտուրական-մասսայական աշխատանքի բովանդակություն-
ը յերեսանների ուշադրությունը պետի կենտրոնացնել շինարարության
վրա, մոբիլիզացիայի յենթարկել նրանց՝ մասնակցելու ժողովրդական
տնտեսության սոցիալիստական վերակառուցմանը և վորդուրի ել ավե-
լի ակտիվ մասնակցություն ցույց տալու հնդամյակի կատարման հա-
մար մղվող պայքարին:

Պետք է այնպես անել, վոր ակումբային մասսայական աշխատանքի
բոլոր ձևերը հետապնդեն նույն նպատակը, նպատակն լուծելու այն
խնդիրը, վորով զբաղված է արտադրողական ամբողջ կուլիտիվը:

2. Այն յերեսանները, վորոնք աշխատում են տեխնիկայի ասպե-
րիվում, կատարում են ուղղա-Ֆիզիկուլտուրային աշխատանք, աշխա-

տում են այնպիսի հարցերի շուրջը, ինչպես պարտուր և անդրադի-
տուրային վերացումը, աշխատանք պետք է տանեն վոր միայն յերեսեց
յանքի ներսում (տեխնիկայի ընդհանուր հիմքը, անդրադետների ցուցա-
կադրությունը և այլն), այլև պետք է անցկացնեն կուլտուրական-մաս-
սայական մեծ ձեռնարկումներ:

Որքանակ՝ տեխնիկները պետք է կազմակերպեն տեխնիկական նախ-
ձեռններին նվիրված մասսայական տոն, ուղղա-Ֆիզիկուլտուրային աշ-
խատանքով զբաղված յերեսանները պետք է կազմակերպեն ուղղակա-
նացման և Ֆիզիկուլտուրային նվիրված տոն և մասսայական ուղղական
արշավ:

3. Պաղերի կազմակերպումը (սենյակի խաղեր, վիկտորինաներ, քա-
տարակցիոններ, ակումբային-մասսայական խաղեր), գեղարվեստա-
կան սպասարկումը (կինո, մանկ-թատրոն, յերաժշտական աշխատանք
և այլն), կրթական աշխատանքը (գրքի ընթերցանություն, գեղարվես-
տական ընթերցում, դրույցներ, պատմություններ) — այս բոլորը պետք
է յենթարկել հնդամյակի համար մղվող պայքարի յնդերներին, հա-
մարվել այդ բովանդակությունը:

Կուլտուր-մասսայական աշխատանքի առավելությունն այն է, վոր
նա համապատասխանում է յերեսաններին մասսայորեն արտադրողա-
կան աշխատանքով ընդգրկելու յնդերին: Նույնը և եքսկուրսիոն-տուրիս-
տական աշխատանքի վերաբերմամբ: Եքսկուրսիան վորպես մեթոդ պետք
է ողնի յերեսաններին արտադրողական աշխատանքի դանադան բնա-
զավառներում (սոցիալարարության դիտումը և ուսումնասիրություն-
ը, հնդամյակի պրոպագանդը և այլն):

Յերեսանների աշխատանքի պաշտպանության և կենցաղի ասպարիզում

Պիոներներից շատերն արդյոք նկատում են, վոր յերեսեց բնակած
տանն օրական 14—16 ժամ աշխատում է անչափահաս «սպասուհին» կամ
ղայակը:

Պիոներները դիտե՞ն արդյոք, վորքան է վաստակում փոքրիկ-լրտ-
գրավաճառը, վորտե՞ղ է գիշերում, ի՞նչ պայմաններում է ապրում
նա:

Պիոներներն ստուգո՞ւմ են արդյոք, թե ինչ դրուժյան մեջ է ար-
հետավոր-անայնադործի աշկերտը:

Յերեսանների աշխատանքի վերաբերյալ թվերն առիթ են տալիս
մտածելու այդ յնդերի մասին: Թվերը ցույց են տալիս, վոր «փոքրա-
հասակ բանվորների թիվը դյուղատնտեսությունում 1926 թվի համե-
մատությամբ աճել է 16,3 տոկոսով: Անհատական տնտեսություննե-
րում 1926 թ. փոքրահասակները կազմում էլին վարձով աշխատողնե-
րի ընդհանուր թվի 27,1 տոկոսը, իսկ 1927 թ.՝ 30,4 տոկոսը: Գյու-
ղական համայնքներում և յամբական վարձուների մոտ փոքրահասակ
բատրակները 1926 թ. կազմում էլին 19,4 տոկոս, իսկ 1927 թ.՝ 22
տոկոս» («М. Пистрак, «Вопросы педагогической пропаганды»):

Այս հարցարար յերեսաններին պետք է ազատել շահագործումից
և մոտեցնել մանկական, պիոներական հասարակայնության:

Հավաքը նակաղ տվեց. «Մենք պետք է ամեն դնով ձգտենք, վոր
կենտարդուվեն այն ուրենները, վորոնք արգելում են մանուկներին աշ-

* Ռազմա-Ֆիզիկուլտուրային աշխատանքի մասին նյութեր կդանես հանձնարար-
ված գրքերում և համապատասխան հեռակա դասում:

խառանքը մինչև 14 տարեկան, մենք պետք է պայքարենք բարեկամ-
բու համար աշխատավոր յերեխաների կյանքի և աշխատանքի պայման-
ները, պայքարենք մինչև վոր աչք որևէնքը գործազրկի ամենուրեք»
(Համաքի նախադր, էջ 103):

Կոլեկտիվը պարտավոր է կատարել այս նախադր: Պետք է պայ-
քարել վաղ միայն յերեխաներին պաշտպանող սրենքների գործազրկման
համար, այլև ընդգրկենք բոլոր յերեխաներին ամենից առաջ արտա-
գադրողական աշխատանքով:

Բայց մեր աշխատանքը միայն այն ժամանակ մոտիկ կլինի շահա-
պարտության ազատվող անչափահասներին, յերբ մենք հետազայում հող
կտանենք ապահովելու աչք յերեխաների դրուժյունը, վորպեսզի նրանք
ստիպված չլինեն դնալ մասնավորի մոտ և աշխատել ստրկական պայ-
մաններում:

Իրավացի յեն ԽՍՀՄ-ի պիտանքները, յերբ իրենց կուլտուրա-
ֆեռտի կետերից մեկում նշում են այնպիսի հարցեր, ինչպես «գրավել
հասարակայնության ուշադրությունը դեպի արտադրողական աշխա-
տանքի հարցերը և կազմակերպել մանկության պաշտպանության հանձ-
նաժողովներ»: Մի այլ կետում ասված է. «Կազմակերպել աշխատանք
վարձով աշխատող յերեխաների և պատանիների հետ»: Յերեխաների
աշխատանքի պաշտպանության գործը պետք է կազմակերպվի՝ սերա
չիման մեջ լինելով Աշխատակուստի որդաների հետ: Մանկության
պաշտպանության հարցը չափազանց լայն և քիչ հետադրոված բնա-
զավառ է: Պիտանքակազմակերպության ակտիվությունն այստեղ շատ
բան կարող է անել:

Կա մի մոտացված բնագավառ, վոր նույնպես բավարար չափով
ընդգրկված չէ պիտանքական ազդեցությամբ — դա հարյուրավոր ման-
կատներն են: ԽՍՀՄ-ում տասնյակ միլիոններ են ծախսվում մանկա-
տների վրա: Հարց ենք տալիս, քաղաքում քա՞նի պիտանքական կոլեկ-
տիվներ են աշխատում մանկատներում, հետաքրքրվո՞ւմ են արդյոք,
թե ինչ է կատարվում մանկատներում, վորտեղ հաճախ նկատվում է
խեղդող մթնոլորտ խորհրդային հասարակայնությունից կտրվելու և
մեղ խորթ մանկավարժների պատճառով, մաքրո՞ւմ են արդյոք այդ
ծանր մթնոլորտը: Սա աննշան բնագավառ չէ: Բանվորների յերեխա-
ներից բաղկացած ուժեղ կոլեկտիվները պետք է ողնեն մանկատան պիտ-
անքակազմակերպությանը դուրս գալ մանկատան չորս պատերից և մաս-
նակցել սոցիալիստական շինարարությանը:

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՈՒԵԿՏԻՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Խմբակ կամ բրիգադ

Կամավորությունը, ամբողջ աշխատանքը յերեխաների ակտիվու-
թյան և ինքնազործունեյության վրա կառուցելը բնորոշում են արտա-
գադրողական աշխատանքը:

Նա, ով յերկար ժամանակ հետևել է արտադրողական աշխատան-
քին, պիտի խոստովանի, վոր արտադրողական աշխատանքը հետզհետե
սկսում է արտացոլել սոցիալիստական շինարարության առորդա կյան-
քը: Արտադրողական աշխատանքն սկսում է լցվել քաղաքական բու-

վանդակությամբ, անցնում է կոմունիստական դաստիարակության
ունյութի վրա:

Այս հանդամանքն առիթ է տալիս մտածելու, թե ակումբային աշ-
խատանքի սովորական ձևերը, այսպես կոչված՝ խմբակային աշխա-
տանքը, համապատասխանո՞ւմ են արդյոք նոր խնդիրներին, արտա-
գադրողական աշխատանքի բովանդակությանը: Պետք է խոստովանել,
վոր ակումբային աշխատանքի ձևը հնացել է: Ըստ ճյուղերի խմբակ-
ների կազմակերպումն իրեն չի արդարացնում:

1. Ճյուղային խմբակը, ղեկուգը զբամխմբակը կամ ռադիստների,
գրական, տիխացիոն խմբակներն իրենց էյուլթյամբ չեն կարող աշխա-
տել փոխադարձ շիման մեջ, միասին, միացյալ ճակատով լուծելու հա-
սարակական-քաղաքական խնդիրները:

Խմբակային սիստեմը խզում է առաջ բերում կոմունիստական գաու-
ստիարակության թեորիայի և պրակտիկայի միջև:

2. Աշխատանքի ճյուղային սիստեմն ստեղծում է խզում հասարա-
կական կյանքից: Ռադիստի, ավիացիայի, խմբական յերեքնորդության
խմբակներում աշխատող յերեխան կարող է հեշտությամբ ամփոփվել
խմբակի նեղ շրջանակներում և ասել — յես յերզում եմ, սղոցում եմ
կամ խարտոցում եմ — ի՞նչ դործ ունեմ սոցիալիզմի հետ:

3. Խմբակային սիստեմը շատ քիչ հնարավորություններ ունի ծա-
վալելու յերեխաների ակտիվությունը և ինքնազործունեյությունը և
կոտորակում է նրանց հետաքրքրությունները:

1. Խմբակները սիստեմն ստեղծում է ամբողջ աշխատանքն արհես-
տականորեն մասսայականի և խմբակայինի բաժանելու անհրաժեշտու-
թյունը, չնայած վոր թե՛ խմբակային և թե՛ մասսայական աշխատան-
քի բովանդակությունը միևնույնն է:

Անհրաժեշտ է նոր ձև: Այդ ձևը գտնված է: Իա բրիգադային սիս-
տեմն է, վորն արդարացրել է իրեն 1930 թ. ամստային աշխատանքի
փորձով:

Բրիգադային ձևն ունի հետևյալ առավելությունները.

1. Բրիգադային սիստեմը վերացնում է ճյուղային հատկանիշը,
վորի համաձայն կազմակերպվում է յին խմբակները, մանկական կոլեկ-
տիվի աշխատանքին տալով հասարակակաան-քաղաքական միատնական
նպատակադրություն, ստեղծում է թեորիայի և պրակտիկայի միաս-
նականություն:

2. Բրիգադային սիստեմը հնարավորություն է տալիս արագ կեր-
պով արձագանքելու սոցիալիստական շինարարության առաջադրած
խնդիրներին, հնարավորություն է ստեղծում ավելի լայն ծավալել սոց-
մրցումը:

3. Բրիգադները կազմվում են ամբողջապես յերեխաների ակտիվու-
թյան և ինքնազործունեյության հիման վրա, լիովին բավարարում են
յերեխաների հետաքրքրությունը և չեն ստիպում նրանց թափառել
առանյակ խմբակներում:

4. Բրիգադը վերացնում է խմբակային և մասսայական աշխատան-
քը արհեստական կերպով բաժանելու անհրաժեշտությունը: Բրիգադն
ունի հսկայական հնարավորություններ աշխատանքի ամենարագմազան
ձևեր ոգտազործելու տեսակետից:

Այն հարցերը, թեմաները, վորոնց շուրջն աշխատելու յեն բրի-

կազմում համախմբված յերեխաները, առաջադրվում են հենց կյանքից: Որքնակի համար կարելի չե բերել մի թեմայի սլանը, վորի շուրջն աշխատում է յին յերեխաները 1930 թ. առաջ Մոսկվայի Սամոյլիկի ռա-յոնի մանկական հրատարակներում: Բրիգադը կոչվում էր «Նոր դար-րոց»: Նրա աշխատանքի բովանդակություն մեջ մտնում էր.

1. Տանել բացատրական աշխատանք յերեխաների մեջ դպրոցի պոլիտեխնիկացման նշանակության մասին, վորից հետո լուսաբանել ստրագված ձեռնարկության ծնողներին մեջ և այլն:

2. Կազմակերպել հետամնացներին ոգնելու դործը:

3. Գրապազանդ մղել սրարուսի համար:

4. Կազմակերպել աշխատանքի և տեխնիկայի դործը (կապել արդ-Ֆինայանի կատարման և պոլիտեխնիկացման հետ):

5. Բրիգադը հանձն է առնում «սահմանադրության որը» անցկաց-նելու պատասխանատվությունը: Կազմակերպել և անցկացնել «սահմա-նադրության որը»: Դեկտվարել «սահմանադրության անկյունի» կազ-մակերպման գործը:

Կարող է արդյոք յերեխան խմբակում ստանալ այնպիսի վորոշակի ուղղություն և ունակություններ, իր ստեղծագործության և ակտիվու-թյան այնպիսի կիրառում, ինչպես բրիգադում: Իհարկե, վոչ:

Բրիգադը կազմվում է կամավոր կերպով: Յերեխաներն իրենք են ընտրում իրենց աշխատանքի որքեկտը: Բրիգադը կարող է բաղկացած լինել 10-ից մինչև 30-40 հոգուց: Այդ կախված է բրիգադների բնույ-թից, հասարակական թեմայից, յերեխաների հասարակական պատ-րաստությունից և տեղական պայմաններից:

Սակայն չպետք է յենթադրել, վոր խմբակներն իսկույն պետք է վե-րացվեն: Վերակառուցումը պետք է կատարել այնպես, վոր յերեխա-նեքն բժրենեն և գիտակցեն այդ վերակառուցման անհրաժեշտութունը և անձամբ մասնակցեն նրան: Բրիգադային սիստեմը չի պահանջում բոլորովին վերացնել խմբակները, սակայն այդ խմբակները չեն կարող աշխատանքը յենթարկելու բրիգադի կենտրոնական թեմային: Բրիգա-դին իր պլանի վորոշ հարցերը լուծելու համար կարող է բաժանվել խմբերի: Սամոյլիկի ռայոնի վերահիշյալ պլանում կարելի չե տեսնել, վոր յերեխաներն արհեստանոցներում աշխատելու համար բաժանվում են խմբերի, նայած արհեստանոցների տարրություն:

Մանկական ակտիվի, մանկական ինքնագործունեությունից հարցե-րն արտադրողական աշխատանքում նույնքան սուր կերպով են դրո-վում, վորքան պիտեկրագմակերպություն մեջ: Արտադրողական աշ-խատանքի ինքնագործ բնույթն ստիպում է աշխատանքը կազմակերպել արտադրողական մանկական ակտիվի միջոցով: Անպայման պետք է համարել ակտիվը և հրահանգել: Մանկական ակտիվի կոնֆերանսում կոլեկտիվը պետք է դնի աշխատանքի դրություն և կազմակերպման հարցերը: Կոնֆերանսները վոչ միայն պետք է լինեն ընդհանուր շրջա-նային, այլև պետք է գումարվեն թաղամասերում և բանվորական ա-վաններում:

Կոլեկտիվը սեփական ուժերով, մանկական կայանները (տեխնի-կական, սաղմա-Ֆիդկուլտուրային), դպրոցի և լուսբաժնի ոգնությունը պարտավոր է կազմակերպել զանազան կուրսեր ակտիվի համար աշխա-

տանքի տարբեր ճյուղերի կազմակերպիչներ պատրաստելու նպատա-կով: Կարելի չե չատ արագ կերպով պատրաստել այնպիսի կազմակեր-պիչներ, վորոնք կարողանան իրենց բրիգադում ղեկավարել ավիտո-դելային, գրադարանային, սաղմա-Ֆիդկուլտուրային և այլ աշխո-տանքները:

Մանկական ինքնավարության կազմակերպչական կառուցվածքն արտադրողական աշխատանքում բարդ չպետք է լինի: Արտադրող-ական հիմնարկների և ձեռնարկումների տեսակների և ձևերի բազմա-զանությունը հնարավորություն չի տալիս վորոշելու մի ընդհանուր կառուցվածք այդ բոլոր հիմնարկներին համար: Մի բան պարզ է միայն, վոր հիմնական ըջիջը լինելու չե բրիգադը: Բրիգադը պատասխանա-տուն է աշխատանքի կոչված՝ բրիգադավարը, պետք է մտնի ինքնավարու-թյան ղեկավար որդաններում:

ՍՐՑՈՒՄԻ ԱՐՏԱԿՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Սոցիալիստական մրցման լայն ծավալումը նոր ասպարեզ է բաց անում կոմունիստական դաստիարակության առաջ: Սոցիալիստական մրցումը պետք է հնարավորություն տա ծավալելու յերեխաների մրցման բնական ձգտումը: Սակայն պետք է ասել, վոր արտադրողական աշ-խատանքում սոցիալիստական մրցումն աններելի կերպով թույլ է ծա-վավում: Կան միայն առանձին, դեռ լավ չձևակերպված փորձեր:

Պիտեկրական կոլեկտիվը պետք է հոգ տանի լայն ծավալելու և խո-րացնելու սոցմրցումն իր արտադրողական աշխատանքի ասպարեզում: Պետք է այնպես անել, վոր յերեխաները ըմբռնեն սոցմրցման էությունը, նրա իմաստը: Սոցմրցումը պետք է դառնա ներքևից աճող մի շարժում: Յերեխաների համար սոցմրցումը պետք է դարձնել, ինչպես ասում էր ընկ. Ստալինը կուսակցության 16-րդ համագումարում, «պատվի, փառ-քի, հերոսության դործ»: Պիտեկրները պետք է, նախապես պատրաստ-վելով, անցկացնեն մի շարք դրույցներ և ցույց տան, թե իրենք ինչպես են մրցում: Յերեխաների համար մանկավարժական տեսակետից առ-ուանձնապես արժեքավոր է տեսնել սոցմրցումն արտադրության մեջ, դործարանում:

Պլանավորում

Սոցմրցումը պահանջում է, վորպեսզի մրցող կողմերը հանձն առ-նեն պարտավորություններ (պայմանագրեր), ինչպես խնամքով կա-տարված հաշվառում: Առաջի հատուկ ուշադրություն պետք է դարձնել պլանավորման և հաշվառման հարցերի վրա: Սոցմրցումն ավելի մեծ հնարավորություններ է տալիս լուծելու այդ հարցերը: Այդ հարցերի լուծման հետ կապված աշխատանքը, սրինակ՝ պլան կազմելը կամ հաշ-վառումը, ավելի հասկանալի, ավելի հետաքրքիր կդառնա յերեխաների համար:

Սոցմրցման պարտավորություններն այն կենտրոնական խնդիրներն են, վորոնց համար աշխատելու չե բրիգադը: Այդ խնդիրների շուրջը հենց կառուցվում է բրիգադը (խմբակի և այլն) աշխատանքի պլանը, ներառյալ նաև ուրիշ ձեռնարկումներ, վորոնք թեև անմիջապես չեն կապված չեն պայմանագրի հետ (պատույտներ և այլն):

Այն կոլեկտիվը, վորն աշխատում է ձեռակերպում հիմնարկում (ակումբ, հրապարակ ե այլն), վորտեղ կա մանկավարժական կոլեկտիվ, պետք է աշխատի այդ հիմնարկի ընդհանուր պլանով և ակտիվ մասնակցութիւն ցույց լաւ նրա աշխատանքի պլանի կազմութեանը: Միանգամայն այլ է, յերբ կոլեկտիվը կամ ողտկը տանում են ինքնուրույն աշխատանք,—այդ դեպքում այդ պլանը մտնում է կոլեկտիվի ընդհանուր պլանի մեջ:

Ի՞նչ պատկեր է ունենալու արտադարոցական ինքնուրույն աշխատանք կատարող կոլեկտիվի աշխատանքի պլանը:

Մենք արդեն գիտենք, վոր պլանը պետք է ճշտի և կոնկրետացնի սոցիալամանգիրը: Պլանը բարդ չպետք է լինի: Պլանը պետք է կազմել յերկու տեսակ:

1. Ընդհանուր պլան

Ընդհանուր պլանը կազմվում է այնպես, ինչպես ողտկի և կոլեկտիվի պլանը: Այստեղ հիշվում են աշխատանքները և նրանց կատարման ժամկետները: Ուրիշ խոսքով, պլանը պետք է պատասխանի յերկու հարցի՝ ի՞նչ անել և ի՞նչ ժամկետում կատարել:

2. Որացուցային պլան

Որացուցային պլանը կամզվում է մի տասնորյակի համար և ունի հետևյալ պատկերը.

Դ՞նչ անել	Ժամկետը	Ո՞ւմ և հանձնարարված նախապարտատեղան աշխատանքը և կատարումը	Ո՞ւմ պետք է ներգրավել	Աշխատանքի ձևը	Մասնութ. այն մասին, թե ի՞նչպիսի կատարված աշխատանքը

Պիտնե՞րկազմակերպութեան մեջ, դպրոցում և արտադարոցական աշխատանքում հաճախ նկատվում է հետևյալ յերևույթը. պլանը կազմված է, հաստատված և ստորագրված, դրանից հետո նա այլևս անձեռնմխելի չէ:

«Պլան կազմելը պլանավորման սկիզբն է միայն» (Ստալին):

Պլանը պետք է լինի ճկուն և կատարման ընթացքում թարմացվի և յրացվի: Դա առանձնապես կարևոր է արտադարոցական աշխատանքի համար, վորը պետք է համապատասխանի յերևույթների նորանոր պահանջներին և հետաքրքրութիւններին:

Սոցմըցումը սահանջում է լալ կազմակերպված հաշվառում: Հաշվառման բացակայութեանը հնարավորութիւն չի տալիս մրցող կոլեկտիվներին տեսնել մրցման արդյունքները: Ուստի յերևույթները հետաքրքրածը կազմակերպման հաշվառման անհրաժեշտութիւնը և կանոնադրութեանը կազմակերպման հաշվառումը: Հաշվառման ուշադրամ, ցայտուն ձեւերը բաղաժամի են. բացի հին օրագրերից, յերևացել են սոցմըցման տխրատակները, շարժական ցուցահանդեսները, ինքնատուգումներ և այլ ձևեր:

Հաշվառման պետք է յենթարկել վոչ միայն մրցման պայմանագրով ընդգրկված աշխատանքները, այլև կոլեկտիվի կատարած մյուս աշխատանքը:

ՀԱՍՍ.ՐԱՎԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻՐ

Դաստիարակութեան հարցերի պրոպագանդը

Արտադարոցական աշխատանքի լայն թափը կապահովվի միայն այն ժամանակ, յերբ հասարակայնութեանը լայն մասնակցութիւն ցույց կաւ նրան: Հասարակայնութեան ներգրավման գործն արտադարոցական աշխատանքի ասպարիզում բնկնում է պիտնե՞րկազմակերպութեան և ժողովուրդագրութեան սրղանների վրա: Պիտնե՞րկազմակերպութեանը դրա համար պետք է ողտագործի բոլոր հնարավորութիւնները:

Մոմենտներից մեկը, վորի ողտութեամբ պետք է մոբիլիզացիայի յենթարկել լայն հասարակայնութեանը, հանդիսանում է խորհուրդները: Մոմենտների վերընտրական կամպանիան: Լայնորեն ողտագործելով խորհուրդների վերընտրական կամպանիան, նախընտրական և ընտրական ժողովները, արվող նակադները, պիտնե՞րկազմակերպութեանը պետք է մոբիլիզացիայի յենթարկել հասարակայնութեան ուշադրութեանը յերևույթների հանդեպ, աշխատելով, վորպետքի արտադարոցական աշխատանքն ասպահովվի անհրաժեշտ միջոցներով և կադրերով:

Չպետք է կարծել, վոր արտադարոցական աշխատանքը կարելի չէ ասպահովել միմիայն պիտնե՞րկազմութեան տակ չունեն բավարար չափով միջոցներ և իրենց արամագրութեան տակ չունեն բավարար չափով միջոցներ և մանկավարժական կադրեր: Միայն այդ կազմակերպութիւնների ջանքերը շատ անբավարար են համեմատում յերևույթների այն հսկայական մասային, վոր պետք է կազմակերպել: Միայն հասարակական միջոցների, ուժերի մասնակցութեանը և հասարակական շենքերի ու սարքավորման (դպրոցներ, ակումբներ, ստադիոններ և այլն) ողտագործութեանը կարող են ողտել հարկ յեղած բարձրութեան վրա դնելու արտադարոցական աշխատանքը: Հասարակական ակտիվը պետք է ողտագործվի ական աշխատանքը: Հասարակական ակտիվը պետք է համար: Պիտնե՞րկազմակերպմանից առաջ մանկավարժական աշխատանքի կազմակերպչի և դպրոցի հետ միասին վր Լուսարժեի արտադարոցական կազմակերպչի և աշխատանք տանող իրենց հասարակական մտածեմ մանկավարժական աշխատանք տանող իրենց հասարակական ակտիվի ինտրուկտժի (հրահանգում) և պատրաստման մակտան ակտիվի ինտրուկտժի (հրահանգում) և պատրաստման մակտան ակտիվի ինտրուկտժի (հրահանգում), Պիտնե՞րկազմակերպչի և Պիտնե՞րկազմակերպչի կանտրոնական տունը: Այդ նպատակով պետք է գումարել բնակարանների կանտրոնական տունը: Այդ նպատակով պետք է գումարել բնակարանների կանտրոնական տունը:

ընկերությունների կուլտուր-կենցաղային հանձնաժողովները հրահանգ-
չափան խորհրդակցություններ, կազմակերպել կարճատև հուրանք ա-
ռանձին ճյուղերի աշխատողներ պատրաստելու համար (Ֆիզիկուլտուր-
նիքներ, ռազմական կազմակերպիչներ, դրադարանային աշխատողներ և
այլն) : հրահանգչական պատույթներ և այլն :

Արտադրողական հիմնարկին կից հասարակայնությունը ներգրա-
վելու համար կազմակերպվում է ոժանդակ խորհուրդ : Ոժանդակ խոր-
հուրդը կազմվում է դարձյուններում գոյություն ունեցող ոժանդակ խոր-
հուրդների նման :

Պետք է հաշվի առնել կուլտուր-նյութական այն մեծ ուժանդակու-
թյունը, վոր պետք է ցույց տան պրոֆմիությունները :

Մացմրցումը արտադրողական աշխատանքով զբաղված կազմա-
կերպությունների միջև կնստատի ուժեղացնելու հասարակայնություն
մասնակցությունը արտադրողական աշխատանքում : Այստեղ արժե
մասնանշել «Կրասնի պրոլետարիյ» գործարանի (Մոսկվա) փորձը :

Գործարանային պիոներարազան և գործարանի բանվորական հասարա-
կայնությունը պայմանադիր են կնքել : Ահա այդ պայմանագրի մի բանի
կետերը . «կազմակերպել առնվազն յերեք բնակիչներով յուրաներում
մանկական կարմիր անկյուններ, վորոնց միջոցով սխտեմատիկ աշխա-
տանք տանել Գոնակայա փողոցի յերեխաների հետ», «նեբրջարվել տունը-
վազն հարյուր նոր պիոներների և հարյուր հոկտեմբերիկների, կազմա-
կերպելով նրանց գլխավորապես նորակազմ կուլեկտիվներում և ողակնե-
րում Գոնակայա փողոցի բնակիչներով յուրաներին կից» : Սա՛ պիոներ-
ների կողմից : Իսկ բանվորները հանձն են առել . «համապատասխան
կազմակերպությունների միջոցով հաջողեցնել հատկացնելու միջոցներ
և շենքեր այն տներում, վորոնք սահմանված են մանկական անկյուն-
ների կազմակերպման համար», «գործարանի ակումբի աշխատանքի
պլանի մեջ մտցնել կանոնավոր մանկական ակումբային որերի կազմա-
կերպումը, ազատվելով նորմայ աշխատանքի պայմաններով (խմբակ-
ների ղեկավարություն, գեղարվեստական ուժեր և միջոցներ, եքսկուր-
սիաներ և այլն), ակումբի զբաղարանում բաց անել մանկական բա-
ժին . . .» :

Այս փորձը պետք է լայնորեն ոգտադործել : Պիոներական արտադրող-
րոցական աշխատանքի ասպարիզում հասարակայնության մասնակցու-
թյան մի ուրիշ, ավելի փայլուն որինակ և հանդիսանում արդյունաբե-
րական յերկու հոկտեմբերի «Կրասնի Սորմոլոյի» և «Կրասնի Պուտիլովեց»
գործարանի միջև կնքված պայմանագրերը :

Դաստիարակութան եարցերի պրոպագանդը և պիոներ-
կազմակերպութունները

Պորհրդային դաստիարակության սկզբունքների պրոպագանդը
հանդիսանում է արտադրողական աշխատանքի ամենակարևոր բնա-
դավաններից մեկը, վորը սակայն գժբախտաբար վրիպել է պիոներկազ-
մակերպության ուշադրությունից :

1. Արտադրողական հիմնարկների և ձեռնարկումների սխտեմը
նշանակում է անմիջական ազդեցություն գործել յերեխայի վրա և դաս-
տիարակել նրան սոցիալիզմի վրդով : Մանկավարժական պրոպագանդի

միջոցով մենք ներգործում ենք ծնողների վրա, վորոնք ստանալով վա-
րուղ գիրքավորում, ստեղծում են յերեխաների դաստիարակութան հա-
մար անհրաժեշտ պայմաններ, ոգնելով պետությունը՝ դաստիարակելու
իրենց յերեխաներին մեղ համար ցանկալի ուղղությունը :

2. Մենք ամենքս գիտենք, թե ազգարնակության յետամնաց խա-
վերը վորքան անգրագետ են և աղետ՝ մանկավարժական տեսակետից :
Նրանց մոտ դաստիարակության ամենատարածված միջոցը ղեռնս
ձեռն է ու հայհոյանքը : Ձերմ և ուշադիր վերաբերմունքի փոխարեն՝
կոպիտ «կորիւր, դահլես մի՛ տանի» : Ծնողներին սովորեցնել ճիշտ դաս-
տիարակել իրենց յերեխաներին աննշան հարց չէ, այլ հսկայական մի
խնդիր, վոր ունի ընդհանուր պետական մեծ նշանակություն :

Կարվարը, ըմբռնելով այդ, կհասկանա մանկավարժական պրոպա-
գանդի նշանակությունը, իր կուլեկտիվի հետ միասին մանկավարժա-
կան պրոպագանդ տանելու մեծ անհրաժեշտությունը : Արտադրողա-
կան աշխատանքի սխտեմը միայն այն ժամանակ ճիշտ ուղղություն և
լայն ծավալ կստանա, յերբ կլրացվի մանկավարժական պրոպագանդի
աշխատանքներով ազգարնակության լայն խավերում :

Մանկավարժական աշխատանքի բովանդակությունը կազմում են .

1. Բացատրել ազգարնակությանը կամոնիստական դաստիարակու-
թյան հիմնական հարցերի ելությունը : Տալ ծնողներին մանկավարժա-
կան հիմնական գիտելիքներ : Ցույց տալ ծնողներին, թե ինչպես պետք
է ոգտվել մանկավարժական արդ հիմնական գիտելիքներից :

2. Բացատրել ծնողներին՝ թե անհրաժեշտ է, վորպեսզի իրենց յե-
րեխաները մտնեն կամոնիստական մանկական կազմակերպություն մեջ :

3. Ազգարնակությանը ակտիվ մասնակից դարձնել յերեխաների
դաստիարակության գործին, բանի վոր պետությունն այժմ հնարա-
վորություն չունի սմբողջովին իր վրա վերցնել նոր սերնդի դաստիա-
րակությունը :

Պայքարել, վորպեսզի հասարակական կազմակերպությունները և
մեծերը ավելի մեծ հոգ տանեն յերեխաների մասին :

Մանկավարժական պրոպագանդին պետք է տալ լայն թափ :

Այդ աշխատանքը պետք է տանել վոչ միայն մայրերի նեղ շրջանու-
կում, այլև կազմակերպելով այնպիսի մասնայական ձեռնարկումներ,
ինչպես դիպուտաներ, աղիտղատեր, այդ աշխատանքն անցկացնելով
փորքան հնարավոր է մեծ մասշտաբով :

Կուլեկտիվի առաջիկա խնդիրներից մեկն է նաև գործարկումի կուլտ-
հանձնաժողովի և ակումբի պլանի մեջ մտցնել մի շարք նախաձեռնում-
ներ մանկավարժական պրոպագանդի ասպարեզում :

Կոնկրետ պրոպագանդի ձևերը .

1. Դիպուտաներ ծնողների լայն մասնակցությամբ :
2. Հարց ու պատասխանի յերեխաներ, վոր պետք է կազմակերպել
վոչ միայն բանվորական ակումբներում, այլև բանվորական հանրակա-
ցարաններում, բնակիչներով յուրաներում և այլն :
3. Դասախոսութուններ և գրույցներ ծնողներ և բանվորների հետ
հանրակացարանում, բնակիչներով յուրաներում և ակումբներում :
4. Հատուկ կոնսուլտացիաներ և տեղեկատու սեղաններ դաստիա-
րակության հարցերի վերաբերյալ :

5. Երջիկ ցուցահանդեսներ և փոփրիկ անկյուններ՝ նվիրված գաստարակութան հարցերին:

6. Կուրսեր և խմբակներ հասարակական ախտիվի համար, վորն ստանալով վորոշ ծանոթություններ, կարողանա նպաստել նրանց արածմանը ազդարնակության լայն խավերում: Կուրսեր և խմբակներ մայրերի համար՝ նվիրված յերեխաների դաստիարակության հարցերին:

7. Ծնողների երկուսիսաներ գեպի որինակելի մանկական հիմնարկները, վորտեղ նրանք են տեսնել, թե ինչպես պետք է դաստիարակել յերեխաներին:

Վերջերս անցկացվեց յերեխաների ծեծի դեմ պայքարելու համառուսական կամպանիան: Այդ կամպանիայի փորձը տվեց մանկավարժական պրոպագանդի մի շարք փայլուն ձևեր: Մի շարք արդյունարեբական կենտրոններում այդ կամպանիան արտահայտվեց գեղարվեստական ձևավորված մանկական մեծ դեմոնստրացիաներով:

Պիտներկազմակերպությունը պետք է նախաձեռնարկ հանդիսանա մանկավարժական լուսավորության տներ հիմնելու գործում և նպաստի մանկավարժական պրոպագանդի ժուրնալի («Друг Детей») տարածմանը:

Գծվար է դասի շրջանակներում մանրամասն նշել մանկավարժական պրոպագանդի մեթոդները: Գլխավոր շեշտը պետք է դնել, ինչպես այդ յերեում է աշխատանքի հանձնարարված ձևերից, ազդարնակության մաստարական ընդգրկման վրա: Մանկավարժական պրոպագանդի բոլոր նյութերը պետք է տրվեն հետաքրքիր, հասկանալի և վոշ խրթին դետական ձևով:

Այսպես, պիտներական կոլեկտիվը արտադրողական աշխատանք տանելով յերեխաների հետ, պայքարելով կոմունիստական ազդեցությունը տարածելու մանկական մասսաների վրա, ներդրալելով անկարծակերպ յերեխաներին հնգամյակի համար մղվող պայքարում, կառուցում է բազմամիլիոն մանկական մասսաների կոմունիստական դաստիարակության գործը:

Տեմպերը, հնգամյա պլանի իրագործման համար մղված պայքարը պահանջում են նաև մանկական կոմունիստական կազմակերպությունեց աշխատանքի աննախընթաց տեմպեր, պահանջում են առավելագույն թափ բոլոր յերեխաներին անխտիր արտադրողական աշխատանքով ընդգրկելու ասպարեզում:

Պետք է ամեն կերպ ուժ տալ արտադրողական աշխատանքի ծավալմանը, ընդլայնել անկազմակերպ յերեխաների ընդգրկման մաստարները: Այս բնագավառում կարող է ծագել և կծագեն զգվարություններ: Կոլեկտիվը պետք է համարձակ, բայլչեիկորեն հաղթահարի այդ զգվարությունները և անշեղ առաջ ընթանա:

ՍՏՈՒԳԻԶ ՀԱՐՑԵՐ

1. Վորոնք են արտադրողական աշխատանքին ծնունդ տվող պատճանները: Հիմք կա՞ արդյոք արտադրողական աշխատանքը համարելու կոմունիստական դաստիարակության ընդհանուր սխտեմի ինքնուշույն մի մասը: Ի՞նչ առանձնատկություններ ունի արտադրողական

աշխատանքը: Ի՞նչպես կառուցել արտադրողական հիմնարկների և ձեռնարկների սխտեմը:

2. Մանկ. կոմկազմակերպության և արտադրողական աշխատանքի փոխհարաբերությունները: Ի՞նչպիսի բեկում պետք է մտցնել պիտներկազմակերպության մասնակցության մեջ արտադրողական աշխատանքի ասպարեզում:

3. Վորոնք են արտադրողական աշխատանքի բաղկացուցիչ մասերը և նրանց հիմնական բովանդակությունը: Վորոնք են արտադրողական աշխատանքի ծավալման լավագույն ձևերը:

4. Ի՞նչպիսի կազմակերպչական ձևեր ավելի նպատակահարմար են արտադրողական աշխատանքի համար: Ի՞նչ է մանկական ախտիվի դերը արտադրողական աշխատանքում: Ի՞նչպես պետք է հաշվառման յենթարկել և պլանավորել աշխատանքը:

5. Վորոնք են հասարակայնության մասնակցության ձևերն արտադրողական աշխատանքում: Ի՞նչ նշանակություն ունի մանկավարժական պրոպագանդը և ի՞նչպես կազմակերպել այն:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ш у л ь г и н. Воспитание коммунистической морали, изд. «Раб. просвещения» 1929.
2. Резолюция и постановления с'езда по политехнич. образованию, Гиз. 1930.
3. К р у п с к а я. Народное образование и демократия.
4. Х а н ч и н. Общественно-политическое содержание внешкольной работы, изд. «Молодая Гвардия», 1930.
5. С о ч и н, Пионерский квартал, изд. «Молодая Гвардия» 1930.
6. Журнал «Организуите Детвору».
7. „ «Вожатый».
8. Зеленко, Родин, Крылов и Козлов. «Вечера игр и развлечений», «М. Г.», 1929.
9. О внешкольной работе среди детей и подростков (циркуляр НКП, 9 апреля 1929)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածութիւն 2

Կոմունիստական դաստիարակութիւնը և արտադրողական աշխատանքը . . . 3

Պրոներական շարժումը և արտադրողական աշխատանքը 6

Ինչպէս և կառուցվում արտադրողական հիմնարկների և միջոցառումների սխեմները 3

Արտադրողական աշխատանքի բովանդակութիւնը, ձևվերը և մեթոդները . . . 10

Պայքար մանկական մաստաների համար 15

Արտադրողական կոլեկտիվի կազմակերպչական կառուցվածքը 24

Սոցմբցումը արտադրողական աշխատանքում 27

Հասարակայնութիւնը և արտադրողական աշխատանքը 29

Ստուգիչ հարցեր 32

Գրականութիւն 33

Սրբագրեց՝ Ա. Տ.-Մկրտչյան

Պետհրատի տպարան

Գլխավոր 7432 (բ) Պատվեր 1084 Հրատ. № 2153 Տիրաժ 5000

Հանձնված է արտադրութիւն 29 մարտի 1932 թ.
 Ստորագրված է ապրիլ 30 ապրիլ 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0977179

ԿԻՆԸ 30 ԿՈՊ. (21/8 Մ.)

11
26850